

Հայաստանյան գիտությունը եվրոպական հարթակում.

«ԳԱԱ նախագիծը հաղթել է «MSCA & Citizens 2025» մրցույթում

2026-2027 թվականներին Հայաստանում առաջին անգամ կանցկացվեն «Եվրոպական հետազոտողների գիշեր» և «Հետազոտողները դպրոցներում» լայնածավալ գիտահանրամատչելի միջոցառումները:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացրած «ERNA-European Researchers' Night in Armenia» նախագիծը հաղթել է Եվրոպական հանձնաժողովի կողմից իրականացվող «MSCA & Citizens 2025» մրցույթում:

«MSCA & Citizens 2025» մրցույթն իրականացվում է MSCA (Marie Skłodowska-Curie Actions)՝ Եվրոպական միության Horizon Europe ծրագրի շրջանակում: Մրցույթին ներկայացված 241 հայտերից ընտրվել են 49 նախագծեր՝ 40 երկրներից, իսկ ծրագրերի իրականացման համար Եվրոպական հանձնաժողովը հատկացրել է 16.3 միլիոն եվրո ֆինանսավորում:

ՀՀ ԳԱԱ ERNA նախագիծն իրականացվելու է 2026-2027 թվականներին: Կանցկացվեն երկու հիմնական ծրագրային միջոցառումներ՝

1. «Եվրոպական հետազոտողների գիշեր»,
2. «Հետազոտողները դպրոցներում»:

Միջոցառումների ընթացքում գիտնականները, երիտասարդ հետազոտողները և ուսանողները կշփվեն քաղաքացիների, դպրոցականների և երիտասարդների հետ՝ ներկայացնելով գիտության աշխարհը կենդանի փորձերի, ցուցադրությունների, համրային դասախոսությունների և ինտերակտիվ ծրագրերի միջոցով:

Որոշեցրելով «Գիտությունը՝ քաղաքացիների համար, քաղաքացիները՝ գիտության» դիմակայելով մարտահրավերներին՝ կերտենք ապագան՝ կարգախոսը, ERNA նախագիծը նպատակ ունի՝

- խթանել հետազոտողների և հասարակության միջև անմիջական երկխոսությունը,
- բարձրացնել գիտության և նորարարության մասին համրային իրազեկվածությունը,
- ներկայացնել գիտնականի դերը ժամանակակից հասարակության մեջ,
- մեծացնել երիտասարդների հետաքրքրությունը գիտական և հետազոտական կարիերայի նկատմամբ:

Նախաձեռնությունը լիովին համահունչ է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքով Գիտությունների ազգային ակադեմիային վե-

րապահված գործառույթներին, որոնց թվում են՝

- գիտության համրայնացման և հանրահռչակման խթանումը,
- գիտական համայնքի համախմբումը և գիտական փորձագիտական ներուժի զարգացումը,
- գիտության ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնումը և Հայաստանի ինտեգրումը եվրոպական գիտական տարածքին:

ERNA նախագիծն իրականացնում է ՀՀ ԳԱԱ-ն ոչ միայն ներկայացնում է հայկական գիտական համայնքը եվրոպական հարթակում, այլ նաև կյանքի է կոչում գիտության համրայնացման այն առաքելությունը, որն օրենքով վերապահված է Ակադեմիային:

«Եվրոպական հետազոտողների գիշեր» նախաձեռնությունն ամեն տարի անցկացվում է Եվրոպայի հարյուրավոր քաղաքներում՝ ներգրավելով միլիոնավոր այցելուների: 2026 և 2027 թվականներին այս գիտական տոնն առաջին անգամ կանցկացվի նաև Հայաստանում՝ ստեղծելով նոր հարթակ գիտության, կրթության և հասարակության միջև ակտիվ համագործակցության համար:

Այս հաղթանակը կարևոր քայլ է դե-



պի այն ապագան, որտեղ գիտությունը հասանելի է հասարակությանը, իսկ երիտասարդ սերունդը գիտությունը դիտում է որպես իր զարգացման և կարիերայի ճանապարհ:

Նախագիծն գործընկերներն են՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը, «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ը, «Չեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և համրային կապերի բաժին



Հայ լեզվաբանության ուսիվիրան

(ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Հայագիտության մեջ բացառիկ են ակադեմիկոս լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր-անդամ Հրաչյա Աճառյանի գիտական վաստակի դերն ու կշիռը, և անչափ խորհրդանշական ու խոսուն է այն փաստը, որ հայերենագիտական մտքի կենտրոնը՝ ՀՀ ԳԱ լեզվի ինստիտուտը, կրում է հանձնարել գիտնականի անունը: Հրաչյա Աճառյանը ծնվել է 1876 թ. մարտի 8-ին Կոստանդնուպոլսում: Մեկ տարեկան հասակում, արևի երկար նայելով, երկու աչքով կուրանում է: Հնարավոր է լինում բուժել միայն մեկ աչքը, և, ինչպես ինքն է հուշերում գրում, իր բոլոր աշխատությունները մի աչքի արդյունք են: Նախնական կրթությունը ստացել է Սամաթիայի Արամյան, ապա՝ Սահակյան վարժարաններում: Վաղ հասակից հետաքրքրվել է լեզուներով: 1889 թ. ընդունվել է Պոլսի Կեդրոնական վարժարան, որտեղ ոչ միայն գրաբար է սովորել, այլ նաև ուսումնասիրել ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն:

1893 թ. Հ. Աճառյանը իբրև ուսուցիչ աշխատանքի է անցնում Գատրոյուղի Արամյան դպրոցում, մեկ տարի անց՝ Կարինի Սանասարյան վարժարանում: Կարինում ոչ միայն դասավանդում է, այլ նաև շարունակում է տարբեր լեզուների ուսումնասիրությունը: 1895 թ. վերադառնում է Կոստանդնուպոլիս, ապա մեկնում է Փարիզ՝ ուսանելու Սորբոնի համալսարանում: Այստեղ աշակերտում է ժամանակի նշանավոր հնդեվրոպագիտության մեկնիչ՝ հայագետ Անտուան Մեյյեին: Վերջինիս առաջարկով Աճառյանը ֆրանսերեն է թարգմանում դեռևս Կոստանդնուպոլսում պատրաստած լազերենի քերականությունը և բառարանը, որը

Մեյյե «Etude sur la langue laze» վերնագրով ներկայացնում է Փարիզի լեզվաբանական ընկերությանը, որը և հրատարակում է այն: Աճառյանը ընտրվում է այդ ընկերության անդամ: Համալսարանում նա ուսումնասիրում է զենդերեն, սանսկրիտ, արաբերեն, փորձառական ծայնաբանության դասեր է առնում արքա Ռուսլոյի մոտ և փորձառական ուսումնասիրության ենթարկում հայերենի պայթական բաղաձայնները տարբեր գավառներից եկած հայ ուսանողների արտասանությանը՝ այդպիսով դառնալով ոչ միայն փորձառական հնչյունաբանության հիմնադիրը հայ իրականության մեջ, այլ նաև փորձառական մեթոդի առաջին կիրառողը բարբառագիտության ոլորտում:

1897 թ. Աճառյանը մասնակցում է արևելագետների Փարիզում գումարված կոնգրեսին, որտեղ հանդես է գալիս երկու զեկուցումով, որոնք գրավում են նշանավոր հայագետ Հյուբերտի ուշադրությունը: Վերջինս Աճառյանին հրավիրում է Ստրասբուրգ՝ լսելու իր դասախոսությունները: Վեց ամսում ավարտելով Հյուբերտի՝ հայերենի համեմատական քերականության դասընթացը՝ Աճառյանը 1898 թ. գալիս է Հայաստան: Նախ դասավանդում է էջմիածնում, այնուհետև ուսուցչություն է անում Շուշիում, Նոր Բայազետում, Նոր Նախիջևանում, Թեհրանում, Թավրիզում:

1923 թ. վաստակաշատ գիտնականը հրավիրվում է Երևանի պետական համալսարան և այնտեղ աշխատում մինչև կյանքի վերջը (1953 թ.): Դասավանդում է գրաբար, ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, լեզվաբանության ներածություն, համեմատական քերականություն, արևելյան լեզուների և Արևելքի պատմություն, հայ բարբառագիտություն և հայոց լեզվի պատմություն: 1924 թ. նա Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր էր, 1933 թ. ստացել է գիտությունների դոկտորի և վաստակավոր գիտնականի կոչումներ:

Ստալինյան բռնաճնշումները Աճառյանին ևս չեն շրջանցել. իբրև ճակատագրի հեգնանք՝ մեծ հայրենասերը և քաղաքացին, հանձնարել գիտնականը մե-

ղադրվել է՝ հակահեղափոխական, հակախորհրդային, ազգայնամուլական գործունեություն ծավալելու համար, 1937 թ. ձերբակալվել է, երկու տարի անցկացրել աքսորավայրում, ապա 1939 թ. արդարացվել է և վերադարձել Երևան:

ԵՊՀ-ում արևելյան լեզուների և գրականության բաժնի հիմնադրումից հետո (1940 թվականից սկսած) նա եղել է արևելյան բանասիրության ամբիոնի վարիչ: 1943 թ., երբ հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, Աճառյանը ընտրվում է նրա հիմնադիր-անդամների կազմում:

Մեծանուն գիտնականը հրապարակել է շուրջ 250 գիտական աշխատանք, որոնք ընդգրկում են հայերենի ուսումնասիրության բոլոր բնագավառները: Նա հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադիրն է: Հայ բառարանագրության, հայերենի ստուգաբանության, հայ անձնանունների ուսումնասիրության, հայերենի պատմական ու համեմատական քերականության, տիպաբանական-գույնագրական հետազոտության և շատ այլ ոլորտներում Աճառյանի կրթողային աշխատությունները հայերենագիտության համար ունեն հիմնարար և ուղեցույցային նշանակություն: Հսկայական է անվանի հայագետի մանկավարժական վաստակը: Երկարամյա ուսուցչական գործունեության, դասախոսական աշխատանքի ընթացքում նա իր գիտելիքներն անմնացորդ հաղորդել է աշակերտների, ասպիրանտների բազում սերունդների:

Որքան մեծ ու հզոր էր Աճառյանը իբրև գիտնական, նույնքան վեհ ու բարձր էր իբրև մարդ: Այդ մասին ամենից լավ վկայել են իր գործը լավագույնս շարունակած աշակերտները: Մասնավորապես ակադեմիկոս Գ. Ջահուկյանը գրում է. «Անսպառ բարություն և մարդասիրություն, զգայուն սիրտ և բարյացակամություն, լայնախոհ հայրենասիրություն, բնական պարզություն և համեստություն, հունորի երբեք չթուլացող զգացում և կենսուրախություն, բոլոր»

Հայ լեզվաբանության ուսիվիրան

➤1 իրավիճակներում իր մարդկային արժանիքները պահպանելու կարողություն, մերձավորների նկատմամբ ծայրահեղ հոգատարություն, աշակերտներին իր բոլոր գիտելիքները մինչև վերջ նվիրաբերելու և բոլորին օգնելու պատրաստակամություն, - այսպիսին էր Աճառյան մարդը»:

Չորսյա Աճառյանի գիտական հետաքրքրությունների առանցքում միշտ եղել է բարբառային լեզուն: Նա բարբառներին անդրադարձել է ոչ միայն դրանց նվիրված առանձին մենագրություններով, այլև ընդհանրացնող աշխատություններով ու բառարաններով: 1909 թ. ֆրանսերեն հրատարակվում է «Classification des dialectes arméniens» աշխատությունը, որն իբրև ատենախոսություն Աճառյանը ներկայացրել էր Սորբոնի համալսարանին: 1911 թ. լույս է տեսնում այս աշխատության ընդլայնված և վերամշակված հայերեն տարբերակը՝ «Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)» խորագրով: Այս աշխատությունը հայերենի բարբառների առաջին ընդհանրացնող ուսումնասիրությունն էր, որով և հիմնադրվում է հայ բարբառագիտությունը՝ իբրև հայերենագիտության առանձին բնագավառ:

Հայ բարբառագիտության բնագավառում Հ. Աճառյանի կարևորագույն աշխատանքներից է 1913 թ. լույս տեսած «Հայերեն գավառական բառարանը», որը ժամանակին հայերենի ամենաընդգրկուն բարբառային բառարանն էր՝ պարունակելով 30 000 բարբառային բառ:

Բարբառագիտական աշխատանքների համար կարևոր համարելով նաև օտար բառերի բառարանների կազմումը՝ Աճառյանը տարիներ շարունակ հավաքում է թուրքերենից փոխառյալ բառերը և 1902 թվին հրատարակում է «Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ» բառարանը, որում ներկայացնում է այդ բառերը Պոլսի ժողովրդական լեզվում համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառների: Նման բառարանն ուներ ոչ միայն բարբառագիտական, լեզվաբանական արժեք, այլ նաև կոչված էր նպաստելու թուրքական ազդեցությունից հայերենն ազատելու, լեզվի մաքրությունը հնարավորինս վերականգնելու գործին:

Տասնյակից ավելի բարբառների մենագրական ուսումնասիրությունները Աճառյանի հսկայական ավանդն են հայ բարբառագիտության ոլորտում: Նա բարբառագիտական զգալի նյութ է ներկայացնում «Հայերեն արմատական բառարանում», բարբառների քննությանն անդրադառնում է նաև «Հայոց լեզվի պատմություն» և «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատություններում:

Հ. Աճառյանն արժարժել է նաև բարբառագիտա-



կան տեսական հարցեր: Հատկապես կարևոր են 5-րդ դարում հայերենի բարբառների գոյության հարցի վերաբերյալ նրա դիտարկումները, որ արվել են «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ:

Հսկայական է Հորսյա Աճառյանի ավանդը հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում, հայ իրականության մեջ նա համարվում է այդ գիտաճյուղի հիմնադիրը մույնպես: Այս ուղղության նրա հիմնական աշխատությունը «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր ուսումնասիրությունն է: Հ. Աճառյանը ներկայացնում է հայոց լեզվի պատմական զարգացումը, անդրադառնում է հնդեվրոպական նախաշրջանին, քննում նախալեզվին, հնդեվրոպացիների նախահայրենիքին ու մշակույթին առնչվող հարցեր: Աշխատության առաջին մասում Աճառյանը ներկայացնում է հայերենի հնդեվրոպական ծագման բառերի ցանկը՝ համապատասխան նախածևի և ցեղակից լեզուների զուգահեռներով հանդերձ: Ապա այդ բառերը խմբավորում է ըստ իմաստային դաշտերի և դրանց քննությամբ բնութագրում է հայկական քաղաքակրթությունը: Այնուհետև պատմական հաջորդականությամբ ներկայացվում են տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Գրքի երկրորդ հատորում փաստական հարուստ նյութով ներկայացվում են հայերենի քերականական համակարգում կատարված փոփոխությունները, փորձ է արվում որոշելու դրանց մոտավոր ժամանակաշրջանը, նաև պատճառներն ու նպաստող գործոնները:

Հայերենի պատմական քննության ոլորտին են վերաբերում նաև Հ. Աճառյանի կոթողային բառարանները՝ «Հայերեն արմատական բառարանը» և «Հայոց անձնանունների բառարանը»: Արմատական բառարանը պարունակում է այն բոլոր տեղեկությունները, որոնք հայտնի էին հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ հանդիպող մոտ տասնմեկ հազար

արմատների վերաբերյալ: Ընդ որում Աճառյանի հաշվումներով 1604 ստուգաբանությունների հեղինակը ինքն է, և դրանցից 136-ը բնիկ հայերեն բառեր են: Լեզվաբանը կարևորել է Արմատական բառարանի մասին Ա. Մեյեի դիտարկումը. «Ոչ մի երկիր, ոչ մի ժամանակ, ոչ մի լեզու նման կատարյալ աշխատություն չի արտադրած»:

Ինչպես հայ բանասիրության, այնպես էլ հայ ժողովրդի պատմության համար մեծ կարևորություն ունի Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», որում ընդգրկված են հայության մեջ հնուց մինչև 1500 թ. գործածված անձնանունները: Բառարանը ներկայացնում է անձնանունները կրողների վերաբերյալ պատմական և ստուգաբանական տեղեկություններ, բանասիրական նշումներ:

Հայագիտության խնդիրներն Աճառյանը դիտարկել է նաև ընդհանուր և համեմատական լեզվաբանության շրջանակներում: «Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների» վերնագիրը կրող հսկայածավալ աշխատությունը պետք է բաղկացած լիներ 10 հատորներից: Աճառյանի կենդանության օրոք հրատարակվել է աշխատության միայն մեկ հատոր (1952 թ.), և վեց հատորներ ակադեմիկոս է. Աղայանի խմբագրությամբ հրատարակվել են մինչև 1971 թվականը: «Լիակատար քերականության» վերջին երեք հատորները (Շարահյուսություն, Բառագիտություն, Իմաստաբանություն) Աճառյանը չի հասցրել վերջնականապես ամփոփել՝ թողնելով անմշակ նյութեր, հրապարակման պատրաստ առանձին հատվածներ. դրանք ի մի են բերվել և մեկ հատորով հրատարակվել 2005 թ.:

Հ. Աճառյանի մեծարժեք աշխատություններից հիշատակելի է նաև «Հայոց գրերը» հետազոտությունը, որը 1904 թ. արժանացել է Լազարյան ճեմարանի մրցանակին: Աշխատությունը նվիրված է Մաշտոցի կենսագրությանը, հայ գրերի գյուտին, հայ գրերի պատմությանը վերաբերող աղբյուրների քննությանը:

Դիտարկված աշխատությունները, անշուշտ, ընդամենը մի կարևոր մասն են Աճառյանի բոլոր ուսումնասիրությունների, բայց, կարծում ենք, ներկայացվածն էլ բավական է՝ պատկերացում կազմելու հայ գիտության և ընդհանրապես լեզվաբանության բնագավառում Աճառյան գիտնականի ունեցած աներևակայելի մեծ դերի ու կշռի վերաբերյալ: Ընդհանուր և հայ լեզվաբանության տարբեր ուղղություններում Հ. Աճառյանի հսկայական ներդրումը գիտնականների քանի ու քանի սերունդների համար հետազոտություններ կատարելու հաստատուն հիմք ու մեկնակետ է դարձել և դեռ բազում սերունդների համար է կատարելու այդ դերը:

Վիկտոր ԿՍՎԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի տնօրեն,
բանասիրական գիտությունների դոկտոր



Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում, ս.թ. փետրվարի 20-ին տեղի է ունեցել «OGANESSON» մրցանակի հանձնման արարողությունը: Մրցանակը հիմնել է հայազգի մեծանուն գիտնական, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար Յուրի Յովհաննիսյանը:

Մրցանակաբաշխության արարողությանը մասնակցել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԵՊՀ պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը:

«OGANESSON» 2025 թվականի մրցանակի չորս դափնեկիրներից է մեր հայրենակից, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի համակարգային ծրագրավորման ինստիտուտի տնօրեն Հարություն Ավետիսյանը:

Տեղի է ունեցել անվանի գիտնական Յուրի Շովհաննիսյանի հիմնած «OGANESSON» մրցանակի հանձնման արարողությունը

Միջոցառման շրջանակում Ռուբեն Հարությունյանն ակադեմիկոս Յուրի Յովհաննիսյանին հանձնեց «Կայունության կղզի» խորագրով փայտափորագրությունը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Յուրի Յովհաննիսյանի ծննդավայր Դոնի Ռոստովի բնակիչների անունից: Փայտափորագրությունը նվիրված է Յուրի Յովհաննիսյանի կողմից Մեմոլեյեի պարբերական աղյուսակի տարբերի «Կայունության կղզի» պատմական հայտնագործությանը, որն արժանացել է մի շարք միջազգային մրցանակների: Փայտափորագրության հիմքում հայտնի «Scientific American» գիտական ամսագրի մեր հազարամյակի առաջին համարն է, որի շապիկի վրա պատկերված է Յուրի Յովհաննիսյանի հայտնաբերած պարբերական աղյուսակի տարրերի «Կայունության կղզին», որը սկսվել է 114-րդ տարրով: Մեծարժեք փայտափորագրությունը պատրաստել է գործարար և անվանի վարպետ Գարրի Գրիգորյանը՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հարավային մասնաճյուղի գլխավոր գիտաշխատող, հասարակական գործիչ Արարատ Գոմցյանի նախաձեռնությամբ:

Ռուբեն Հարությունյանը Յուրի Յովհաննիսյանին նաև փոխանցեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Յովհաննես Յովհաննիսյանի ուղերձը, որում նշված է, որ 2026 թվականից համալսարանի Ֆիզիկայի ինստիտուտում հաստատվում է ակադեմիկոս Յուրի Յովհաննիսյանի անվան կրթաթոշակ:

«Յուրի Յովհաննիսյանը, ծնվելով Ռոստովում, մեծանալով Երևանում, մասնագիտություն ստանալով

Մոսկվայում և վերջին 60 տարիներն ապրելով ու գործելով Դուբնայում, պատկանում է ողջ մարդկությանը: Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը սերտ համագործակցում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի և մի շարք այլ գիտական հաստատությունների հետ», - ասաց Ռուբեն Հարությունյանը:

«ՕԳԱՆԵՍՈՆ» մրցանակի մասին

2022 թվականին Յուրի Յովհաննիսյանն արժանացել է Սբերբանկի գիտական մրցանակի՝ գերծանր տարրերի սինթեզի վերաբերյալ իր հիմնարար աշխատանքի համար: Ակադեմիկոս Յուրի Յովհաննիսյանը որոշել է իր մրցանակային գումարը հատկացնել գիտության ոլորտում կարևոր ներդրում ունեցող գիտնականների խրախուսմանը:

Մրցանակի անվանումը ծագում է պարբերական աղյուսակի օգանեսոն (լատիներեն՝ oganesson, Og) քիմիական տարրից՝ 118 ատոմային համարով: Այս տարրն անվանակոչվել է Յուրի Յովհաննիսյանի պատվին Մաքուր և կիրառական քիմիայի միջազգային միության (IUPAC) առաջարկությամբ՝ 2016 թվականին տրանսակտինոիդ տարրերի ուսումնասիրության մեջ ունեցած իր ներդրման համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Հայրենիքի նվիրյալ վաստակաշատ պատմաբանը

(ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի ծննդյան 65-ամյակի առթիվ)



Վերջերս լրացավ անվանի պատմաբան, գիտության հնուտ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աղասու Մելքոնյանի ծննդյան 65-ամյա հոբելյանը: Չորս տասնամյակ շարունակ նրա ողջ գործունեությունը կապված է հայոց գիտական կաճառի և հայ պատմագիտական մտքի կենտրոնի՝ Պատմության ինստիտուտի հետ:

Ա. Մելքոնյանը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Վրացական ԽՍՀ Ախալքալաք քաղաքում: 1982 թ. գերագույն դասնալստանի ակադեմիայի ֆակուլտետը, որից հետո ուսումը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1986 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում և շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում լաբորանտից հասել է տնօրենի պատասխանատու պաշտոնին:

Նրա ղեկավարման տարիներին ինստիտուտի գիտական գործունեության շրջանակներն ընդլայնվել և համալրվել են պատմագիտական հետազոտությունների արդիական նոր ուղղություններով, հրատարակվել են մեծաքանակ արժեքավոր մենագրություններ, ժողովածուներ, դասագրքեր ու հոդվածներ, այդ թվում և արտասահմանում: Այս ուղղությամբ շոշափելի արդյունավետությանը աչքի է ընկել նաև ինստիտուտի տնօրենը իր հեղինակած 20 ծանրակշիռ գիտական մենագրություններով, համահեղինակությամբ լույս տեսած տասնյակ աշխատություններով, դասագրքերով և հարյուրավոր գիտական հոդվածներով, ուն աշխատությունները հրատարակվել են ավելի քան տասը լեզուներով:

Վերջին քսան տարիների ընթացքում Պատմության ինստիտուտի ամենամեծ նվաճումը, թերևս, «Հայոց պատմություն» ութ գրքից բաղկացած ակադեմիական քառասունհինգ հատորանոց լույսընծայում է (ութերորդը ներկայումս հրատարակման փուլում է), որն իրականացվեց հիմնականում ինստիտուտի տնօրենի գիտական ղեկավարության հետևողական ջանքերի շնորհիվ, և որտեղ նորովի, օբյեկտիվորեն և անաչառ ներկայացվում է մեր ժողովրդի պատմությունը:

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանն աշխարհի շուրջ 20 երկրներում մասնակցել է պատմագիտության տարբեր խնդիրներին նվիրված բազմաթիվ միջազգային գիտա-ժողովների՝ պատշաճորեն ներկայացնելով հայ պատմագիտության արդի մակարդակն ու դրսևորելով մասնագիտական խոր գիտելիքներ, ինչի շնորհիվ նա բարձր հեղինակություն է վայելում միջազգային պատմագիտական շրջաններում՝ մասնակցելով նաև մեր ինստիտուտի միջազգային ճանաչմանը: Դրա վրա ապացույցն է ինստիտուտի սերտ համագործակցությունը մի շարք արտասահմանյան երկրների (ՌԴ, Վրաստան, Եգիպտոս և այլն) և

հայկական Սփյուռքի կազմակերպությունների գիտակրթական կենտրոնների հետ: Վերջինս հիմնականում պայմանավորված է Ա. Մելքոնյանի՝ Սփյուռքում ունեցած մեծ հեղինակությամբ:

Պատահական չէ, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում այսօր առաջատար հայագիտական կենտրոնների շարքում է, ինչու՞մ անուրանալի մեծ վաստակ ունի իր արգասաբեր գիտական կազմակերպչական և ազգային հասարակական ակտիվ գործունեությամբ Հայաստանում և նրա սահմաններից դուրս լայն ճանաչման ու հարգանքի արժանացած ակադեմիկոս Ա. Մելքոնյանը:

Ինչպես հայտնի է, հաճախ տաղանդավոր գիտնականները չեն կարողանում լինել գիտության արդյունավետ կազմակերպիչներ, ինչը հիմնականում դրա համար անհրաժեշտ համապատասխան մարդկային հատկանիշների բացակայության հետևանք է, որոնք կարևորագույն բաղադրիչներ են հեղինակավոր և հարգանք վայելող արդյունավետ ղեկավար դառնալու համար: Այս առումով Ա. Մելքոնյանի մեջ շահավետորեն միահյուսված են տաղանդավոր գիտնականն ու գիտության հնուտ կազմակերպիչը:

Ես նրան ճանաչում եմ շուրջ 40 տարի, և մինչ օրս նրան բնորոշ մարդկային բարձր որակները, որոնք նկատելի էին 1986 թ. հոկտեմբերից սկիզբ առած մեր համատեղ աշխատանքի ընթացքում, որևէ փոփոխություն չեն կրել, թերևս միայն գունարվել են փորձառությունն ու իմաստությունը:

Ինստիտուտում աշխատելու առաջին իսկ օրերից Ա. Մելքոնյանն աչքի էր ընկնում աշխատանքի հանդեպ ունեցած պատասխանատվությամբ և մեծ աշխատասիրությամբ ու նպատակասլացությամբ: Օժտված էր վերլուծական կարողություններով և երկաթյա տրամաբանությամբ: Հատկապես տպավորիչ էր, չնայած երիտասարդ տարիքին, հայոց պատմության նրա գերազանց և համապարփակ իմացությունը: Գրեթե նույն կերպ նա գիտեր նաև համաշխարհային պատմությունն ու Վրաստանի պատմությունը: Դա պայմանավորված էր իր մասնագիտության հանդեպ նրա ունեցած մեծ փրոփով: Աշոտ Մելքոնյանն աչքի էր ընկնում նաև հայոց լեզվի և գրականության հրաշալի իմացությամբ, ազատորեն տիրապետում էր ռուսերենին, վրացերենին, գերմաներենին:

Օրըստօրե բացահայտվում էին նաև նրա մարդկային բարձր որակները: Ա. Մելքոնյանին բնորոշ էին ազնվությունը, բարեկրթությունը պարկեշտությունը, մարդկանց հետ հաղորդակցվելու կարողությունը, համեստությունը: Հատկանշական է, որ տարիների ընթացքում գիտության բնագավառում ամենաբարձր նվաճումների հասնելն ու զանազան ղեկավար պաշտոններ զբաղեցնելը ոչ միայն չասանեցին նրա վերոնշյալ մարդկային արժանիքները, այլև շատ ավելի ցայտուն դրսևորում ստացան:

Կարճ ժամանակահատվածում ակնհայտ դարձավ, որ հանձնի Ա. Մելքոնյանի ինստիտուտը համալրվել էր տաղանդաշատ, խոստումնալից և խիստ հեռանկարային բարձրորակ կադրով, ով օժտված էր, ինչպես պատմագիտության բնագավառում լուրջ հաջողությունների հասնելու մեծ ունակություններով, այնպես էլ գիտական կազմակերպչական արդյունավետ գործունեության ծավալման համար անհրաժեշտ մարդկային համապատասխան որակներով, որոնց շնորհիվ նա աստիճանաբար ձեռք բերեց կոլեկտիվի սերն ու հարգանքը՝ միաժամանակ հայտնվելով ինստիտուտի ղեկավարության ուշադրութ-

յան կենտրոնում: Ուստի պատահական չէր, որ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո Ա. Մելքոնյանը նախ նշանակվեց ինստիտուտի գիտական քարտուղար, ապա գիտական գծով տնօրենի տեղակալ, իսկ 2002 թ.՝ դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո, դարձավ տնօրեն:

Այդ պաշտոնում ոչ միայն լիովին բացահայտվեցին Ա. Մելքոնյանի գիտական հսկայական կարողությունները, որոնց արգասիքն էր բավականին երիտասարդ տարիքում ՀՀ ԳԱԱ ակադեմիայի թղթակից և իսկական անդամի կոչումներին արժանանալը, այլև նորովի և էլ ավելի համապարփակ դրսևորվեցին նրա գիտական կազմակերպչական ունակություններն ու մարդկային արժանիքները (հայրենասիրություն, լսելու ունակություն, գիտական ու քաղաքացիական խիզախություն, սկզբունքայնություն և այլն), որոնց ներդաշնակությունը կարևոր դեր է խաղում ինստիտուտի զարգացման գործում:

Շուրջ քառորդ դար Ա. Մելքոնյանն իր գործունեությամբ անմնացորդ նվիրվել է հարազատ ինստիտուտի համակողմանի առաջընթացի ապահովմանը, որի ուղղությամբ իրականացված գզալի աշխատանքները հանգեցրել են շոշափելի արդյունքների: Տվյալ առումով շատ կարևոր հանգամանք է, որ Ա. Մելքոնյանը, սկսելով իր աշխատանքային գործունեությունն ինստիտուտում, անցել է բոլոր աստիճաններով՝ հասնելով տնօրենի պաշտոնին, ինչը նպաստել է կոլեկտիվի ղեկավարի և անդամների միջև փոխմտասիրության հաստատմանը՝ դրականորեն անդրադառնալով աշխատանքային մթնոլորտի վրա:

Վերջերս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում նշվեց ակադեմիկոս Ա. Մելքոնյանի 65-ամյակը, որտեղ բազմաթիվ շնորհավորական խոսքեր հնչեցին անվանի պատմագիտական հասցեին: Նիստին մասնակցում էին նաև ՀՀ ԳԱԱ մասնագետ, ակադեմիկոս Ա. Սաղյանը, փոխնախագահ, թղթակից անդամ Պ. Ավետիսյանը և Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը, որոնց ելույթներում հավուր պատշաճի արժևորվեց հոբելյարի գիտական և գիտական կազմակերպչական վաստակը:

Հոբելյանի առթիվ ջերմորեն շնորհավորում ենք ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին և մաղթում քաջառողջություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Ռուբեն ԱՁԻՉԲԵԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

«Գիտություն» թերթի խմբագրությունը սրտանց միանում է շնորհավորանքներին: Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը հայոց ինքնության ու պատմական արժեքների նախաձեռնողը պաշտպանում է մշտապես պահպանել և, մեր այն բացառիկ մտավորականներից, ում բնորոշ են հավատարմությունը դավանած սկզբունքներին ու դրանցից բխող հստակ ու համարձակ քաղաքացիական դիրքորոշումը:

Հայ պատմագիտության երախտավոր, բազմավաստակ գիտնական, հայրենասեր մտավորական Աշոտ Մելքոնյանին ցանկանք նորանոր ձեռքբերումներ իր շնորհակալ և ազգանվեր գործունեության ասպարեզում:

Նոր խթան՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում ճապոնագիտության զարգացման համար

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանային ֆոնդը «READ JAPAN PROJECT» ծրագրի շրջանակում համալրվել է ճապոնիայի վերաբերող 137 մասնագիտական գրքով: Գրքերի շնորհանդեսը տեղի ունեցավ ս/թ. մարտի 10-ին ինստիտուտի ընթերցասրահում:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գոհար Իսկանդարյանը նշեց, որ ճապոնիայի պատմությանը, քաղաքականությանը, տնտեսությանը, մշակույթին և հասարակությանը նվիրված արժեքավոր գրականությունը կարևոր դեր կունենա գիտաշխատողների և երիտասարդ հետազոտողների աշխատանքներում: «Վստահ եմ, որ այս նախաձեռնությունը կնպաստի ոչ միայն մեր գրադարանի հարստացմանը, այլև Հայաստանում ճապոնագիտության զարգացմանը և հայ-ճապոնական գիտական համագործակցության խորացմանը», - ասաց Գոհար Իսկանդարյանը:

Հայաստանում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Աոկի Յուտական հույս հայտնեց, որ այս նվիրատվությունը կաջակցի ճապոնիային և Ասիային վերաբերող հետազոտությունների և ուսումնասիրությունների խորացմանը, երկար տարիներ կծառայի դասախոսներին, հետազոտողներին և ուսանողներին: «Գրքերն ունեն հատուկ արժեք: Գրքերում գեներված են գիտելիքներ ու գաղափարներ, որոնք հեղինակները մշակել են տարիների փորձի միջոցով և դրանք փոխանցում են ապագա սերունդներին հստակ և համակարգված: Հուսով եմ, որ այս գրքե-



րը կդառնան մտավոր ռեսուրս ձեր՝ բոլորի և ապագա հետազոտողների համար: Ես նաև ցանկանում եմ իմ անկեղծ երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր ջանասիրաբար աշխատել են՝ այսօրվա միջոցառումը հնարավոր դարձնելու համար: Չեր ջանքերը նպաստում են ճապոնիայի և Հայաստանի միջև հարաբերությունների ամրապնդմանը», - ասաց նա:

Ճապոնիայում Հայաստանի դեսպան Մոնիկա Սիմոնյանը, կարևորելով ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ճապոնիայի դիվանագիտական և ակադեմիական կառույցների միջև համագործակցությունը, ասաց. «Այս համագործակցությունը կարևոր հանգրվան է ճապոնիա-

յի գիտական, հետազոտական ինստիտուտների հետ բանակցությունները զարգացնելու հարցում: Իմ գործընկեր Աոկի Յուտակայի հետ կշարունակենք աշխատել գիտական կենտրոնների միջև առավել սերտ կապեր ձևավորելու ուղղությամբ: Այս միջոցառումը և գրքերի նվիրատվությունը լավ ուղերձ են և առիթ, որպեսզի այդ կապերն առավել շուտ կարողանանք ձևավորել»:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, ճապոնագետ Եվա Հարությունյանը նշեց, որ ճապոնիայի մասին գրականության պակասը կար, և ինստիտուտի գրադարանային ֆոնդի համալրումը կարևոր գիտական և կրթական ռեսուրս է գիտաշխատողների ու ուսանողների համար:

Միջոցառման ընթացքում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենը շնորհակալագիր հանձնեց դեսպան Աոկի Յուտակային՝ «READ JAPAN PROJECT» ծրագրի իրականացման գործում աջակցության և ջանքերի համար: Դեսպանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտին հանձնեց շնորհակալագիր՝ ի նշան Հայաստանի և ճապոնիայի միջև բարեկամության:

«READ JAPAN PROJECT» ծրագիրը իրականացվում է ճապոնիայի «Tokyo Foundation for Policy Research» կազմակերպության կողմից՝ «The Nippon Foundation»-ի ֆինանսավորմամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Հայ ժողովրդի

(Ալեքսանդր Մյասնիկյանի ծննդյան 140-ամյակի առթիվ)



Խորհրդային ականավոր պետական, կուսակցական և ռազմական գործիչ, հրապարակախոս ու գրականագետ Ալեքսանդր Աստվածատուրի (Ֆեոդորի) Մյասնիկյանը (կեղծանունը՝ Ալ. Մարտունի) հայոց նորագույն պատմության մեծագույն դեմքերից է, որի կյանքը (ցավոք կարճատև) ու բազմաբեղուն գործունեությունը սերտորեն կապված են նաև հայ ժողովրդի ազատության ու ազգային վերածննդի հետ:

Ալեքսանդր Մյասնիկյանը ծնվել է 1886 թ. փետրվարի 9-ին Նոր Նախիջևան քաղաքում (ներկայումս՝ Դոնի Ռոստովի շրջագծում): Նա սովորել է ծննդավայրի Սուրբ Խաչ վանքի ծխական, ապա հայոց հոգևոր թեմական գիշերօթիկ դպրոցներում: Վաղ տարիքից Ալեքսանդրը համակվեց հայ հին ու նոր գրականության ու հայոց պատմության ուսումնասիրությանը: Իս. Աբովյանը, Բաֆֆին, Մ. Նալբանդյանը և Ռ. Պատկանյանը նրա սիրելի գրողներն էին: Որքան շատ էր Ալեքսանդրը խորանում նրանց երկերի ուսումնասիրության մեջ, այնքան ավելի էր մտահոգվում իր ժողովրդի ազատության խնդիրներով, համակվում նրա ազգային-ազատագրական պայքարի տրամադրություններով:

1904 թ. օգոստոսին Ալ. Մյասնիկյանը մեկնել է Մոսկվա և ընդունվել Լազարյան ճեմարանի 7-րդ դասարան, որտեղ սովորելու երկու տարիներին ավելի է խորացել հասարակական և հասարակական գիտությունների մեջ: Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո՝ 1906 թ., նա ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նույն տարում ցարական ոստիկանության կողմից ձերբակալվել է և արտաքսվել Մոսկվայից ու մեկնել է Բաքու, որտեղ մինչև 1908 թ. ծավալել է հեղափոխական գործունեությունը: Այդ ընթացքում նա ծանոթացել է Ստ. Շահումյանի, Բ. Կուրմանյանի և հեղափոխական այլ գործիչների հետ: Այստեղ Մյասնիկյանը հայոց և ռուսաց լեզուներով հանդես է եկել մի շարք դասախոսություններով՝ նվիրված ազգային և ազրաբային հարցերին: Ալ. Մյասնիկյանի պատրաստվածությունն ու այդ օրերի գործունեությունը բարձր է գնահատել Ստ. Շահումյանը:

1911 թ. Ալ. Մյասնիկյանը գերազանցությամբ ավարտում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի տնտեսագիտության բաժինը, որից հետո գորակոչվում է բանակ և ծառայությունն անցկացնում Մոսկվայի կայազորի գորանցներից մեկում, որտեղ նա ծեռք է բերում ռազմական հմտություններ ու գիտելիքներ և պահեստի ենթասպայի կոչումով զորացրվում: Դեռևս 1910 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթում հրատարակվում է նրա «Միքայել Նալբանդյան» ուսումնասիրությունը՝ Ալ. Մարտունիի գրական կեղծանունով: Այստեղ նա բացահայտում է մեծ բանաստեղծի ու հեղափոխական-դեմոկրատի դերը հայ գրականության ու հասարակական մտքի զարգացման գործում: Այդ տարիներին Հայկական հարցը նույնպես եղել է նրա ուշադրության կենտրոնում: 1912

թվականից Ալ. Մյասնիկյանն առաջիններից մեկն էր, որ ռուսական լայն հասարակությանը ներկայացրեց Հայկական հարցի էությունը: Մամուլի էջերում տպագրված իր հոդվածներով և 1913 թ. Հայկական հարցի թեմայով կարդացած դասախոսություններով Ալ. Մյասնիկյանը, ներկայացնելով արևմտահայության վիճակը Թուրքիայի տիրապետության տակ, մերկացնում է արևմտյան տերությունների դիվանագիտության նպատակներն ու խարդավանքները: Ալ. Մյասնիկյանը հետագայում ավելի խորությամբ է զբաղվել ազգային հարցի խնդիրներով, որոնք ժամանակի մամուլում 1913 և 1914 թթ. տպագրվելուց հետո «Ազգային հարցի առթիվ» ընդհանուր վերադասությամբ 1919 թ. լույս է տեսնում Մոսկվայում:

Ալ. Մյասնիկյանի անսահման հայրենասիրության դրսևորումը հայ ժողովրդի պատմական ճակատագրին ու նրա մշակույթին երևում է 1913 թ. հայ գրերի գյուտի 1500 և հայկական տպագրության սկզբնավորման 400-ամյակների առթիվ «Մշակ» թերթի նույնթերթի 26-ի համարում տպագրված «Երկու կուլտուրական տոն» հոդվածում, որտեղ նա հայ մտավորականությանը և մյուս ուժերին հասարակական գործունեության կոչ է անում՝ ժողովրդին խավարից դուրս բերելու համար:

1914 թ. համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ հուլիսին, Ալ. Մյասնիկյանը կրկին գորակոչվեց ցարական բանակ կրտսեր սպայի զինվորական կոչումով և նշանակվեց Մոսկվայում տեղակայված պահեստային գումարտակներից մեկի վաշտի հրամանատար: 1915 թ. հունվարին նրան նշանակում են կրտսեր հրամանատարական կազմի ուսումնավարական դպրոցի պետ: Դա Մյասնիկյանին հնարավորություն տվեց էլ ավելի խորանալու ռազմական արվեստի մեջ, ընդլայնելու իր կապերը հեղափոխականորեն տրամադրված զինվորականների հետ: Շուտով Ալ. Մյասնիկյանին ուղարկում են ռազմաճակատ, որտեղ նա ակտիվորեն մասնակցում է ռազմական գործողություններին, պարզևատրվում Սուրբ Ստանիսլավի, Սուրբ Աննայի և Սուրբ Ստանիսլավի շքանշաններով:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության և ցարի տապալման լուրը Ալ. Մյասնիկյանին հասավ Արևմտյան ռազմաճակատում: Հսկայական գիտելիքներ ունեցող անձնվեր գործիչը, հեղափոխության մեջ ներգրավվելով, շատ շուտով դարձավ համառուսաստանյան մասշտաբի քաղաքական ու զինվորական խոշոր գործիչ: 1917 թ. ապրիլի 6-ին Մինսկում բացվեց Արևմտյան ռազմաճակատի բանակների ներկայացուցիչների համագումարը, որին մասնակցեց նաև Մյասնիկյանը: Համագումարն ընտրում է ռազմաճակատային զինվորական կոմիտե և նախագահություն: Ալ. Մյասնիկյանն ու Մ. Ֆրունզեն ընտրվում են նախագահության անդամ: Այդ օրերին էլ Ալ. Մյասնիկյանը Արևմտյան ռազմաճակատի ու մարզի բոլշևիկների կողմից ընտրվում է ՌՍԴԲԿ VI համագումարի պատգամավոր: Համագումարում նա հանդես է գալիս ռազմաճակատի վիճակի և Մինսկի բոլշևիկյան կազմակերպության գործունեության մասին գեղուցումով: Սեպտեմբերի տեղի է ունենում Հյուսիսարևմտյան մարզի (Բելոռուսիայի) և Արևմտյան ռազմաճակատի բոլշևիկների առաջին կոնֆերանսը, որտեղ ձևավորվում է ՌՍԴԲԿ Հյուսիսարևմտյան մարզային կազմակեր-

պությունը, որն ընտրում է կոմիտե՝ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ:

Հոկտեմբերյան հեղափոխության օրերին Ալ. Մյասնիկյանը գտնվում էր Մինսկում: Հոկտեմբերի 26-ին լսելով Պետրոգրադում զինված ապստամբության հաղթանակի լուրը՝ անմիջապես հրավիրում է Մինսկի խորհրդի նիստ, որը քաղաքում հռչակում է խորհրդային իշխանություն: Նիստում ընտրվում է Հյուսիսարևմտյան մարզի և Արևմտյան ռազմաճակատի ռազմահեղափոխական կոմիտե, որի ղեկավարն է դառնում Ալ. Մյասնիկյանը: 1917 թ. նոյեմբերի 20-ին Մինսկում սկսվում է Արևմտյան ռազմաճակատի զինվորների II համագումարը, որը Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար է ընտրում Ալ. Մյասնիկյանին: 1917 թ. դեկտեմբերից Գերագույն գլխավոր հրամանատարի պարտականությունները նույնպես դրվում են Ալ. Մյասնիկյանի վրա:

Փաստորեն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ՌՍԴԲԿ Կենտկոմը և խորհրդային կառավարությունը Ալ. Մյասնիկյանին միաժամանակ վստահում են բարձր ու պատասխանատու չորս պաշտոն: Այդ բոլոր նշանակումներում Ալ. Մյասնիկյանը հանդես է բերում տաղանդավոր կազմակերպիչի, պետական ու կուսակցական հմուտ ղեկավարի, ռազմաքաղաքական ստրատեգի փայլուն կարողություններ: 1918 թ. գարնանը, երբ Արևելքում բորբոքվել էր պայքարը սպիտակ գեներալների և չեխ խռովարարների դեմ, Ալ. Մյասնիկյանն ուղարկվեց Վոլգայի շրջան՝ որպես Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար: Հաջողությամբ լուծելով իր առջև դրված խնդիրները և Պոլովոիեում հաստատելով խաղաղություն՝ նա նորից վերադառնում է Բելոռուսիա:

1918 թ. դեկտեմբերի 30-31-ին Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ տեղի է ունենում ՌԿ(Բ)Կ Հյուսիսարևմտյան մարզային VI կոնֆերանսը, որն այնուհետև հայտարարվում է Բելոռուսիայի կոմկոմի առաջին համագումար: 1919 թ. հունվարի 1-ին Բելոռուսիան հռչակվում է խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ալ. Մյասնիկյանն ստանձնում է այդ հանրապետության Կենտգործկոմի նախագահի և ռազմական գործերի ժողովրդի պաշտոնները: Ընտրվելով այդ կարևոր պատերազմի Ալ. Մյասնիկյանն իր բոլոր ուժերը նվիրաբերում է Բելոռուսիայի ինքնուրույն պետականության ստեղծման ու ամրապնդման գործին:

1919 թ. գարնանը ՌԿ(Բ)Կ Կենտկոմի որոշմամբ Ալ. Մյասնիկյանը Բելոռուսիայից տեղափոխվում է Մոսկվա, որտեղ սկզբում աշխատում է որպես ՌԿ(Բ)Կ Մոսկվայի կոմիտեի ռազմական կազմակերպիչ և մայրաքաղաքի պաշտպանության օպերատիվ շտաբի պետ, ապա սեպտեմբերին ընտրվում է ՌԿ(Բ)Կ Մոսկվայի քաղաքային ու նահանգային կոմիտեների առաջին քարտուղար:

Երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, Հայաստանի կոմկոմը 1920 թ. դեկտեմբերի սկզբին խնդրեց ընդհանուր դիմեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմին, որպեսզի վերջինս Ալ. Մյասնիկյանին գործող շայտախմբի պատասխանատու աշխատանքի: Ալ. Մյասնիկյանը Հայաստան է գործուղվում ավելի ուշ՝ 1921 թ. ապրիլի 21-ին, նույն օրը եթե ընդգրկվելով ՌԿ(Բ)Կ Կոմկոմի քուրդի **➤ 5**

«Կոնֆլիկտ, տարածք և անդրազգայնություն. դարաբաղյան երկրորդ պատերազմի ազգագրություն» գրքի շնորհանդեսը



Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Կոնֆլիկտ, տարածք և անդրազգայնություն. դարաբաղյան երկրորդ պատերազմի ազգագրություն» (Conflict, Space and Transnationalism: An Ethnography of the Second Nagorno-Karabakh War. Palgrave Studies in Urban Anthropology, Palgrave Macmillan. 2025) գրքի շնորհանդեսը: Աշխատությունը նվիրված է դարաբաղյան հակամարտության և 44-օրյա պատերազմի վերաբերյալ համա-

պարփակ ուսումնասիրությանը: Հեղինակներն են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մշակութային մարդաբանության բաժնի առաջատար գիտաշխատող Արսեն Հակոբյանը և Իտալիայի Մեսսինայի համալսարանի մարդաբանության և ազգագրության ասոցացված պրոֆեսոր Մարչելլո Մոլլիկան: Գիրքը լույս է ընծայել «Palgrave Macmillan» գիտական հեղինակավոր հրատարակչությունը:

Քննարկման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: «Այս գիրքը գիտական լուրջ նվաճում է հայագիտության մեջ: Այն դիտարկում է պատերազմի անձնային բաղադրիչը և ունի ուշագրավ եզրակացություններ: Աշխատությունը շատ հարցեր է փորձում լուծել: Հուսով եմ, որ գիրքը կստանա իր արժանի գնահատականը նաև մրցանակաբաշխության ասպարեզում: Հեղինակներին շնորհավորում եմ այս արժեքավոր աշխատանքը հրատա-

րակելու կապակցությամբ և մաղթում ստեղծագործական նոր նվաճումներ», - ասաց ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական ղեկավար Պավել Ավետիսյանը նշեց՝ գիրքը նախևառաջ պատերազմի միջոցով վերափոխվող հանրությունների խնդրի մասին է: «Այս կոնֆլիկտը բազմերես է, և դրա քննարկումները տարբեր առումներով պետք է տարվեն: Միջազգային այս համագործակցության շրջանակում կատարած աշխատանքը լավագույն օրինակներից մեկն է: Նման աշխատանքներ պետք է շատ կատարվեն, այս ողբերգությունը բոլոր առումներով պետք է քննարկման առարկա դառնա», - ասաց Պավել Ավետիսյանը:

Արսեն Հակոբյանը և Մարչելլո Մոլլիկան մինչ այս աշխատությունը հեղինակել են «Սիրիահայերը և թուրքական գործոնը. Քեսաբը, Հալեպը և Դեյր էզ-Չորը սիրիական պատերազմում» (Syrian Armenians and the Turkish Factor Kessab, Aleppo and Deir ez-Zor in the Syrian War)

գիրքը: Սիրիական պատերազմի մասին գրքում ցույց է տրված, թե ինչպես են ինքնուրույնում ու պատկանությունը դառնում անդրասահմանային հարվածների թիրախ՝ վերարտադրելով Ցեղասպանության հիշողությունն ու գոյատևման միևնույն սպառնալիքները՝ թուրքական գործոնի դերակատարմամբ ու մասնակցությամբ: Այս գրքի վրա աշխատելու ժամանակ էլ սկսվել է դարաբաղյան երկրորդ պատերազմը, և թուրքական գործոնը 2020 թ. դարաբաղյան պատերազմում վճռորոշ դեր ունեցավ: Եվ Սիրիայի պատերազմի մասին գրքի վերջաբանը սկսվում է հայադրեքսանական 2020 թ. հուլիսյան սահմանային բախումների նկարագրությամբ, որտեղ առաջին անգամ ի հայտ են գալիս հակամարտության անդրազգայնացման միտումները՝ Սիրիայից բռնության արտահանման միջոցով:

Մինչ դարաբաղյան երկրորդ պատերազմի սկսվելը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողները Լեռնային Դարաբաղում դաշտային աշխատանքներ են կա- **➤ 5**

մեծանունն պավակը

➤ 4 կազմում: Ապրիլի 13-ին Մոսկվայից մեկնելուց առաջ, նա տեսակցություն է ունենում Վ. Լենինի հետ, որի ընթացքում նրանք մանրամասն գրուցում են Կովկասում տարվելիք աշխատանքների մասին: Այդ առթիվ հետագայում Ալ. Մյասնիկյանը գրել է. «Միանգամից պարզ դարձավ, որ Արևելքում կատարվելիք աշխատանքը բավական բարդ է և պատասխանատու, և այդ պատճառով էլ ես խնդրեցի ընկեր Լենինին՝ համառոտ շարադրել իր մտքերը թղթի վրա, նամակի ձևով, որպեսզի այդ նամակը ես կարողանամ հասցնել Կովկասի ընկերներին, որ նրանք կարողանան ղեկավարվել նրանով իրենց ամենօրյա աշխատանքում»: Լենինը կատարում է Մյասնիկյանի խնդրանքը, որի արդյունքում ծնվում է «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված հայտնի նամակը: Ալ. Մյասնիկյանին տրվել էր նաև Լենինի ստորագրությամբ մանդատ, որտեղ նշված էր նրան Կովկաս ուղարկելու նպատակը, և տեղական կուսակցական ու խորհրդային բոլոր մարմիններին առաջարկված էր նրան ցույց տալ ամեն տեսակի աջակցություն: Ալ. Մյասնիկյանը Մոսկվայից իր հետ բերում է 20 վագոն հացահատիկ և այլ պարագաներ, որ Ռուսաստանի կառավարությունն ուղարկում էր սովի ճիւղումներում հայտնված հայ աշխատավորությանը:

1921 թ. մայիսի 4-ին ժամանելով Երևան՝ Ալ. Մյասնիկյանն անմիջապես անցնում է Հայաստանի հեղկոմի նախագահի պարտականությունների կատարմանը: Մայիսի 9-ին հրավիրվում է Երևանի կուսակցական կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ ժողով, որտեղ հանրապետության նոր ղեկավարը հանդես է գալիս իր առաջին ծրագրային ելույթով: Այս ելույթում նա դատապարտում է աշխատավոր գյուղացիության և մտավորականության նկատմամբ Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին թույլ տրված սխալները, պահանջում նրանց հանդեպ վարել մեղմ քաղաքականություն, ինչ-որ չափով զիջումներ անել: 1921 թ. մայիսի 21-ին Հայաստանի հեղկոմը վերակազմվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահ և միաժամանակ ռազմական գործերի ժողովուրդական հաստատվեց Ալ. Մյասնիկյանը:

Նրա ղեկավարությամբ խորհրդային Հայաստանը կարճ ժամկետում հասնում է զգալի նվաճումների: Առաջին հերթին Ալ. Մյասնիկյանը ձեռնամուխ է լինում երկրում կարգավորելու քաղաքական կյանքը: Նրա նախաձեռնությամբ Ռուսաստանից ու մյուս հանրապետություններից հայթայթվում և Հայաստան են հասցվում անդամներ և մյուս-թական օգնության առաջին բեռները: Երկրում մոլեգող համաճարակն ու սովը տեղի են տալիս, կյանքն սկսում է աշխուժանալ, կազմակերպվում են շաբաթօրյակներ, հիմնադրվում կոոպերատիվ տնտեսություններ: Հովի. Թումանյանի ղեկավարությամբ ստեղծվում է Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որն ամրապնդում է կապը Սփյուռքի հետ: Ամենուր անոթավորվում է աշխատանքային կարգապահությունը, բարելավվում պետական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, երկիրն ընկնում է հունի մեջ, ժողովուրդն սկսում է հավատալ իր առաջնորդին ու զնալ նրա հետևից: Հատկանշական է, որ նրա ստորագրությամբ հրապարակված առաջին փաստաթղթերից են եղել Երևանը բարեկարգելու և օրինակելի մայրաքաղաք դարձնելու մասին, անգրագիտության վերացման մասին դեկրետները: ՀԽՍՀ ժողովուրդի



1921 թ. սեպտեմբերի 27-ի նիստում որոշում է ընդունվում նաև թոշակներ նշանակելու ու պարեն հատկացնելու գրականության և արվեստի 18 նշանավոր գործիչների:

Ալ. Մյասնիկյանը դիմում է աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ մտավորականությանը՝ վերադառնալ հայրենիք և նվիրվել նրա շենացման աշխատանքներին: Շատերն արձագանքում են մեծ հայրենասերի կոչին ու գալիս Հայաստան: Նրանց մեջ էին նկարիչ Մարտիրոս Սարյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը և այլք: 1921-1922 թթ. աշխարհի տարբեր քաղաքներից Երևան են տեղափոխվում ազգային մշակույթի շատ գանձեր, գրքեր ու անձնական հավաքածուներ, հիմնադրվում են բազմաթիվ գրադարաններ, այդ թվում՝ հանրային (ազգային) գրադարանը, թանգարաններ ու պատկերասրահներ, Երևանում բացվում է առաջին պետական թատրոնը, կազմակերպվում են գեղարվեստական ցուցահանդեսներ:

Հայտնի իրողություն է նրա հոգատարությունը մարդկանց կարիքների նկատմամբ: Այս առումով հատկապես նշելի է նրա վերաբերմունքը հետազայում աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի նկատմամբ: Նման օրինակները շատ են՝ կապված Ալ. Մյասնիկյանի պաշտոնավարության հետ թե՛ Հայաստանում և թե՛ Անդրերկրյանում աշխատելու շրջանում: 1922 թ. հունվարի 26-29-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի առաջին համագումարը, որը խոշորագույն իրադարձություն էր հանրապետության կուսակցական կազմակերպությունների կյանքում: Այստեղ Ալ. Մյասնիկյանը հանդես եկավ ՌԿ(բ)Կ համառուսաստանյան 11-րդ կոնֆերանսի արդյունքների և Հայաստանում խորհրդային շինարարության ընթացքի մասին զեկուցումներով: Համագումարի ավարտից մեկ օր հետո՝ հունվարի 30-ին, բացվեց խորհուրդների համահայաստանյան առաջին համագումարը, որտեղ հանրապետության ուսումնական գործունեության մասին հաշվետվությամբ հանդես եկավ Ալ. Մյասնիկյանը, որում տրված էր Հայաստանի տնտեսական ու քաղաքական իրավիճակի ճիշտ պատկերը, նշված էին հերթական խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները ու միջոցները, բացահայտված էին հետագա զարգացման հեռանկարները:

Հայաստանում աշխատելու կարճ ժամանակամիջոցում Ալ. Մյասնիկյանն իր մեծ հնայքով դարձավ ժողովրդի սի-

րելի առաջնորդը, նրա շահերի հարազատ արտահայտիչն ու իղծերի թարգմանը, նրա սրտակից ու հարազատ բարեկամը: 1922 թ. մարտի 12-ից Ալ. Մյասնիկյանը գտնվում էր ձևավորվող Անդրֆեդերացիայի ղեկի մոտ՝ հենց սկզբից զբաղեցնելով ֆեդերատիվ պետության դաշնության խորհրդի նախագահի, իսկ հետո ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնները: Նրա անմիջական ղեկավարությամբ էին լուծվում ֆեդերացիայի կյանքի գրեթե բոլոր կարևորագույն հարցերը: Այդ պաշտոններում նա գործնական-կազմակերպչական և գաղափարական-քաղաքական վիթխարի աշխատանք կատարեց Անդրկովկասում:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրֆեդերացիայում աշխատելու տարիներին Ալեքսանդր Մյասնիկյանը զբաղվել է գրական-ստեղծագործական աշխատանքով, իր հողվածներով, գրախոսություններով, բանավոր ելույթներով, գրույցներով, դիտողություններով ու խորհուրդներով ուղղություն տվել երկրամասի գրական-հասարակական կյանքին:

Գտնվելով Անդրկովկասում՝ Ալեքսանդր Մյասնիկյանը մտնում էր որպես համամիութենական մասշտաբի կուսակցական և պետական խոշոր գործիչ: Նա երկրի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ էր, ԽՍՀՄ ԿԿԿ-ի նախագահության անդամ: Նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամության թեկնածու:

1925 թ. մարտի 22-ին անսպասելիորեն կտրվեց հայ ժողովրդի հարազատ զավակի՝ Ալեքսանդր Մյասնիկյանի կյանքի թելը: Հայտնի բուլշևիկներ Ս. Մոզիլևսկու և Գ. Աթաբեկյանի հետ նա Թիֆլիսի օդանավակայանի մոտ ափից լիքսի վթարի զոհ դարձավ: Նրա ողբերգական մահի խոր վիշտ պատճառեց ժողովրդին և կուսակցությանը: Անցել է մեկ դարից ավելի ակնավոր հեղափոխականի, նշանավոր կուսակցական ու պետական գործիչ մահվան օրից: Ժամանակն անկարող է մոռացության մատնել նրա թանկահին հիշատակը: Ա. Մյասնիկյանի կերպարն ապրում է ժողովրդի շարունակվող հերոսապատումների, մեր առաջընթացի և արարման մեջ: Նա իր հետևից թողել է անմար ու մշտաշող մի գիծ, որ խորհրդանշում է նրա հավերժությունը գալիք սերունդների հիշողության մեջ:

Ալ. Իսահակյանը 1925 թ. ապրիլի 22-ին Վենետիկից Մ. Սարյանին ուղարկած նամակում, նկարագրելով ողջ սփյուռքահայության ապրած վիշտը, գրում էր. «...Ալեքսանդր Մյասնիկյանը չկա: Նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը, ամենախելացի ու ամենաբարի բուլշևիկը: Ամենաանկեղծ զգացումով ցավում են նրա կորուստը, նա ամեն հայի սրտի մեջ է ապրում, և ամենքը ողբում են նրան: Հայության պաշտպանն էր նա մերկա դառը ժամանակներում: Ափսոս, ի՞նչ կարճ կյանք ունեցավ և ի՞նչ մեծ գործ կատարեց»:

Մեր ժողովուրդն այսօր էլ վառ է պահում իր ականավոր զավակի չխամրող հիշատակը, նրա պայծառ կերպարը: Նրա աշխատություններն ու հողվածները բանիցս հրատարակվել ու վերահրատարակվել են թե՛ Երևանում, թե՛ Մոսկվայում: Ա. Մյասնիկյանի անունով են կոչվել շրջաններ ու գյուղեր, փողոցներ ու մշակութային օջախներ: Նրա կերպարը միշտ էլ եղել է ոգեշնչման աղբյուր, որի արդյունքն է Երևանի կենտրոնում վեր խոյացող նրա գրանիտե մոնումենտալ հուշարձանը, որը երախտագետ ժողովրդի հարգանքի ու սիրո տուրքն է իր փառապանծ զավակի հիշատակին:

Էղի՛ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՊՅ հայոց պատմության ամբիոնի վարիչ,
պ.գ.դ., պրոֆեսոր

➤ 4 տարեկ, ինչպես Արսեն Հակոբյանն է նշում՝ հայ ազգագրագետների վերջին դաշտային աշխատանքներն էին նախապատերազմյան Դարաբաղում: «2020 թ. պատերազմական շրջանում մենք առաջարկություն ստացանք նույն հրատարակչությունից՝ շարունակելու խնդիրը հետազոտել: Քաղաքները՝ Հադրուբը, Հուշին և Ստեփանակերտը, դարձել էին թիրախ ռազմական գործողությունների ժամանակ: 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մենք սկսեցինք մախազի բովանդակության քննարկումն ու ձևավորումը, որը հետագայում ընդունվեց խմբագրության կողմից որպես գրքի հիմնական կառուցվածք ու հարցադրում», - պատմեց Արսեն Հակոբյանը:

Հեղինակը նշեց՝ գիրքը քաղաքային մարդաբանության շրջանակում քննարկում է պատերազմն ու ճգնաժամը: Քաղաքները և տարածքներն այստեղ զուտ ֆիզիկական տարածք չեն, այլ կարևոր են նաև տվյալ հանրության համար հարաբերությունների իմաստով: «Եթե մենք ուսումնասիրում ենք խնդիրն այդ դիտանկյունից, տեսնում ենք, որ բողոքի առաջին շարժումները սկսվում են քաղաքներում՝ Ստեփանակերտ, Հադրուբ, Երևան: Հետագայում առաջին բռնության դեպքերը

տեղի են ունենում նույնպես քաղաքներում՝ Սուճալիթ, Կիրովաբադ և Բաբու: Դրանք առանձին քննարկման առարկա են աշխատության մեջ: 1990 թ. Բաքվի ջարդերով ավարտվում է քաղաքային բռնությունների, քաղաքային ջարդերի շղթան, որը հետագայում վերածվում է պատերազմական գործողությունների: Այնուհետև մենք անցում ենք կատարում արդեն դարաբաղյան առաջին պատերազմին, 2016 թ. ապրիլյան պատերազմի դեպքերին, և նման ընթացքով հասնում ենք արդեն դարաբաղյան երկրորդ պատերազմ՝ կենտրոնանալով քաղաքային տարածքների վրա: Ստեփանակերտը կարևորվում է որպես քաղաքական կենտրոն, քաղաքական ինքնության առանցք ու խորհրդանիշ, հայկական երկրորդ մայրաքաղաք: Հուշին մերկայացվում է էթնոկրոնական բազմազանության և այդ բազմազանությունից ծնվող կոմֆլիկտների շրջանակում: Հետո անցում ենք կատարում 2020 թ. պատերազմի անդրազգային բնույթին: Իսկ աշխատանքի վերջին մասը մշակութային գտնան մասին է, քանի որ մշակութային ցեղասպանության կոնցեպտը հնարավորություն է տալիս քննարկելու տարածքի, մշակույթի ու ճգնաժամի միջև կապը՝ թելադրված պատերազմական մարտահրավերներով:

Մենք մի քանի իրողություններ ենք այստեղ քննարկել՝ կարևոր սրբավայրերի և տարածքների դերակատարումը պատերազմի ընթացքում և հետպատերազմական զարգացումների ժամանակ: Դա, օրինակ, Դաղիվանքն է, որը դառնում է մի ամբողջ միջազգային հարաբերությունների առարկա մշակութային ժառանգության փրկության առումով՝ հայկական ու ռուսական եկեղեցիների և ՌԴ նախագահի միջնորդական առաքելության մերգրավմամբ, և որպես անկլավ պահպանվում է մինչև 2023 թվականի ԼՂՀ անկումը: Վերլուծվում են Ամարասի վանքի շուրջ զարգացումները՝ որպես սահմանային վանքի, որն անմիջապես պատերազմի հետևանք էր: Մենք քննարկում ենք նաև այլ խնդիրներ՝ կապված մշակութային ժառանգության հետ: Իրադարձությունների վերլուծության ընթացքում արդեն վերջաբանի ամփոփման ժամանակ, մի այսպիսի հետաքրքիր երևույթ գտանք. և Գամձասարի, և Դաղիվանքի, և Ամարասի բանալիները չեն հանձնվել: Մենք հույս ունենք, որ այդ չհանձնված բանալիները վերադարձի հնարավորություն կտան: Դրանով էլ ամփոփել ենք աշխատանքը», - ներկայացրեց Արսեն Հակոբյանը:

Գրքի իտալացի համահեղինակը՝

Մարչելլո Մոլլիկան, նշեց. «Այս գրքի հիմնական գաղափարներից մեկն անդրազգայնականությունն է: Նախորդ գրքում այդ անդրազգայնականության գաղափարը սահմանվել էր, բացվել էր, և որոշ կանխատեսումներ կային, որոնք իրականացան դարաբաղյան երկրորդ պատերազմի ընթացքում: Դա հիմնականում արտաքին խաղացողների գալը և կարևոր դեր կատարելը էր: Գրքի վերջին գլուխը նվիրված էր անդրազգայնականության քարտեզագրմանը՝ ինչպես այլ ռեգիոնների կոնֆլիկտների ազդեցությանը Լեռնային Դարաբաղի կոնֆլիկտի վրա: Իհարկե, դրանով նաև մտնում էինք միջազգային հարաբերությունների դաշտ: Կարծում են, որ կարևոր էր ավելի ընդլայնել խնդրի առարկան՝ չբացառելով նաև այլ գիտակարգեր: Նաև կարևոր էր պատմությունը ներառելը, քանի որ անհնար է հասկանալ դարաբաղյան կոնֆլիկտը՝ առանց դրա պատմական զարգացումը հաշվի առնելու»:

Քննարկման ընթացքում մասնակիցները ներկայացրին իրենց դիտարկումները, անդրադարձան առկա հիմնախնդիրներին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Վերջերս լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, տաղանդավոր ու անզուգական Մետաքսյա Սիմոնյանի 100-ամյակը: Մանկության և պատանեկության տարիներին նրա անունը մշտապես հնչում էր մեր տանը՝ Սունդուկյանի անվան թատրոնում կանանց համդերժարանի վարիչ Արուս տատիկի և նույն թատրոնում որոշ ժամանակ գրական մասի վարիչ աշխատած հորս շնորհիվ:

Տատիկա Մետաքսյա Սիմոնյանի անձնական զգեստավորողն էր, նրա առաջին ընկերը ներկայացումին հաջորդող ուրախ և տխուր պահերին, ուստիև աշխատանքից վերադառնալիս կասեր, օրինակ, «Մետաքսյան էսօր շատ լավ խաղաց, ներկայացումից հետո ինձ հո չփաթաթվեց», «Էսօր էլի Մետաքսյան խաղի ժամանակ չկարողացավ ծիծաղը զսպել, վարագույրը ստիպված իջեցրին» կամ «Մետաքսյան էսօր բեմում ծնկների վրա քայլում էր, ցավացրեց»... Մի անգամ էլ պատմեց, որ Մետաքսյայի ծննդյան անունը եղել է Մառլենա, որ փոխել են դերասանուհու ծննդավայր Աշխաբադից Երևան տեղափոխվելուց հետո: Իսկ մի անգամ նախանձով լսեցի հորս պատմածը, թե ինչպես է նա այդ օրը՝ Նոր տարվա երեկոյին, պարել ու օդ թռցրել գեղեցիկ դերասանուհուն...

1987 թ. օգոստոսի 13-ի օրագրային գրառման մեջ գրել եմ. «Մետաքսյա Սիմոնյանն էլ չկա... Ինչպիսի՞ ցավալի մորություն: Բաբկեն Ներսիսյան, հետո՝ Արուս Ասրյան, իսկ հիմա՝ Մետաքսյա Սիմոնյան: Դերթով գնում են...»: Շարունակության մեջ ներկայացրել եմ նրա

Մետաքսյա Սիմոնյան. հայ բեմի չքնաղ դիցուհին (Հուլի-ՊԱՏԱՆՔԻԱՆԵՐ)

հետ կապված հուշ-պատմիկներ, որոնց հիման վրա էլ շարադրում եմ դերասանուհու 100-ամյակի այս հարգանքի տուրքս...

Նրա կերպարով հմայվել եմ դեռ մանկուց: Ես ու քույրիկս երբեմն միասին թերթում էինք Գրիգոր Զարեյանի «Մետաքսյա Սիմոնյան» գրքույկը և «Սունդուկյանի անվան թատրոն-50» պատկերագիրքը: Այս ալբոմում մի շարք թատերական գործիչներ տատիկիս ընծայագրել էին, ու հատկապես հիանում էինք Մետաքսյա Սիմոնյանի լուսանկարներով, մասնավորապես Նիմայի դերում («Դիմակահանդեսը»): Եվ հատկապես ուրախ էինք նրա ընծայագրի համար. «Թանկագին Արուսին ամենաջերմ և բարի ցանկություններով. Մետաքսյա. 29.10.72»: Ուստիև պատահական չէ, որ մի անգամ ֆլոմաստերով նկարեցի Մետաքսյա Սիմոնյանին, և տատիկս այդ նկարը տարավ, նվիրեց դերասանուհուն: Իսկ բեմում առաջին անգամ նրան տեսել եմ 1980 թ., «Խաթաբալա» ներկայացման մեջ Նատալյայի դերում: Թիֆլիսցի գեղեցուկին՝ վառվռուն տարագների մեջ, անմիջապես գերեց ընդամենը ինձնայն մանչուկիս: Մինչև հիմա ունկերումս է նրա զրնգածայն արտասանած առաջին նախադասությունը՝ «Էստի Մարտիրոսյանի տուն չկա...»: Ներկայացումից հետո ծառայողական ավտոբուսն աշխատողների տուն էր տանում, և որքան ուրախացա, երբ դիմացիս նստարանին նստեցին Մետաքսյա Սիմոնյանն ու Ֆրունզիկ Մկրտչյանը (որի Զամբախովը նույնպես անջնջելիորեն տպավորվեց իմ մեջ): «Խաթաբալան» այնքան էի հավանել, որ նույնիսկ փորձեցի դպրոցի երկարօրյա խմբում այն «բեմադրել»...

Չաջորդ անգամ Մետաքսյա Սիմոնյանին տեսա հինգ տարի անց «Ֆիգարոյի ամուսնությունը» ներկայացման մեջ: Այն դիտեցի երեք անգամ: Վաթսուներե անց դերասանուհին դարձյալ շենշող էր կոմսուհի Ռոզին Ալմալիվայի դերում: Բեմն իրենով էր լցնում, ներկայացմանը մասնակցող երիտասարդ

աղջիկները նրա կողքին ասես խամրում էին: Տուն գալով՝ կրկին նկարեցի նրան, այս անգամ՝ գուաշով: Սա արդեն համեմատաբար հասուն գործ է, ուստի նվեր ստանալով այն՝ դերասանուհին տատիկիս միջոցով ինձ ուղարկեց այդ երեկո իր ստացած ծաղկեփունջը:

Տարիներ անց իմ նկարած այդ երկու գործերը վերագտա Մետաքսյա Սիմոնյանի՝ Գրականության և արվեստի թանգարանում պահվող արխիվում... Անակնկալ էր երկրորդ նկարի դարձերեսին տեսնել դերասանուհու ձեռագիրը՝ ընծայագրված իրեն իմ անունից. «Մի-րելի Մետաքսյային, Արծվի Բախչինյանից, 8-րդ դասարան»:

Երրորդ և վերջին անգամ նրան տեսա Շեքսպիրի «Ամեն ինչ լավ է, թե լավ է վերջանում» կատակերգության բեմադրության մեջ: Արդեն նկատելի էր, որ ոտքերի խնդիր ունի, բայց, միևնույն է, խաղը գերազանց էր... Երբ ավարտից հետո քույրիկիս հետ մտանք ավտոբուս, առաջին շարքում նստած տիկին Մետաքսյան մեզ ժպտաց ու հարցրեց՝ «Ո՞ւմ են այս լավ բախիկները»: «Չես ճանաչո՞ւմ,- ասաց թատրոնի աշխատողներից մեկը,- Արուսի թոռն է, որ քեզ նկարել է»: «Մի՞թե,- ուրախացավ դերասանուհին և բռնեց ձեռքս: - Ես քո նկարը մի լավ տեղ, պատին եմ կպցրել...»:

Այն ժամանակ ես չափազանց անոթխած դեռահաս էի: Չայն չհանեցի, լեզվեցնալով դերասանուհու ձեռքի հպումից հաստատ շիկեցի ու շտապեցի առանձնանալ ավտոբուսի վերջում:

Ի՞նչ լուրջ տղա է,- ասաց տիկին Մետաքսյան: Նա քույրիկիս նստեցրեց իր կողքին, համբուրեց ու սկսեց հարցուփորձ անել... Նա շուտ իջավ, թունամյան փողոցում՝ ձեռքի ծաղկեփունջը նվիրելով քրոջս: Չիշում եմ մայթի վրա հեռացող նրա սպիտակ կերպարանքը: Այդպես տեսա Մետաքսյա Սիմոնյանին վերջին անգամ...

Տխրեցի, երբ մի օր տուն գալով՝ տատիկս ասաց, որ Մետաքսյան հիվանդության պատճառով այլևս բեմ չի բարձրանալու: Իսկ նրա մահվան իրո-



Ա. Բախչինյան (14 տարեկան), «Մ. Սիմոնյանը կոմսուհի Ալմալիվայի դերում» (թուղթ, գուաշ)

ղությանը պարզապես անհնար էր հավատալ...

Չեմ կարող ցավով չհնչել, որ մեզ բնորոշ ազգային անհեռատեսության պատճառով մենք այսօր զրկված ենք Մետաքսյա Սիմոնյանի թատերական լավագույն դերակատարումները դիտելու վայելքից: Այո՛, պահպանվել է մի հատված նրա Նիմայից՝ Արբենի-Փափազյանի խաղընկերությամբ, էլի ինչ-որ բաներ... բայց շատ դժվար կլինեն ծայրեծայր նկարահանել նրա մասնակցությամբ եթե ոչ բոլոր, ապա լավագույն բեմադրություններից գոնե մեկը: Գիշտ է, դերասանուհին նկարահանվել է 12 կինոնկարներում, սակայն, ցավով, դրանցից և ոչ մեկը չի կարելի դասել նրա լավագույն թատերական դերակատարումների շարքում: Մետաքսյա Սիմոնյանը նաև ասունքող էր (հիշում եմ Պարույր Սևակի «Մոր ձեռքերի» նրա արտասանությունը). իսկ պահպանվել է նաև արդյոք նրա ասունքի տեսագրություններն ու ձայնագրությունները...

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու
art-collage.com կայքէջից

Լեմկինի ինտրիպուրի հայտարարությունը. ցեղասպանության մեղավորը մեղադրում է գոհին

Ադրբեջանի նախագահը հուլիսի 13-ին հիշողությունն օգտագործում է՝ Զարավային Կովկասում իր ցեղասպանածին նպատակները թաքցնելու համար, նշվել է Լեմկինի անվան ցեղասպանության կանխարգելման ինստիտուտի հայտարարությունում: Ինստիտուտում այսպես են մեկնաբանել Ալիևի վերջերս արած համեմատությունը Բաբկուն գոմեջի հայ ռազմագերիների և Նյուրնբերգյան դատավարությունում դատապարտված նացիստ առաջնորդների միջև:

«Նա անմեղելիորեն նվազեցնում է հուլիսի 13-ի զոհերի մասին հիշողությունն օգտագործելով որպես Զարավային Կովկասում իր ցեղասպանական նպատակների քողարկում: Պետք է հիշել, որ հուլիսի 13-ը եվրոպական հրեականության ոչնչացման համակարգված փորձ էր և մարդկության պատմության մեջ ամենամեծ և ամենաբռնցրելի ցեղասպանություններից մեկը», - նշվել է հայտարարության մեջ:

Ալիևի հայտարարությունը հատկապես վտանգավոր է Իսրայելի և Միացյալ Նահանգների կողմից Իրանի դեմ ագրեսիվ պատերազմի համատեքստում, որը պատերազմական ժամանակ Ադրբեջանը վերածել է Միացյալ Նահանգների և Իսրայելի կարևոր դաշնակցի՝ Ալիևին տալով ավելի մեծ անպատժելիություն, քան նա մինչ այժմ վայելում էր, կարծում են ինստիտուտում:

«Նախագահ Ալիևի հայտարարությունները հայելային արտացոլման օրինակ են, որտեղ ցեղասպանության մեղավորները մեղադրում են իրենց զոհերին հանցագործության համար: Դրանք նաև ցույց են տալիս ցեղասպանություն իրականացնող պետությունների կողմից օգտագործվող մեկ այլ տարածված և խիստ արդյունավետ մարտավարություն՝ այն, ինչը հոգեբաններն անվանում են DARVO՝ ժխտում, հարձակում, զոհի և հանցագործի շրջում», - նշվել է տեքստում:

Չեղիմակները նշել են, որ Ալիևը հերքում է ադրբեջանական ուժերի կատարած վայրագությունների վերաբերյալ հավաստի մեղադրանքները և հայերին անվանում է ռազմական հանցագործներ: Այնուհետև նա խեղաթյուրում է իրականությունը՝ Ադրբեջանին ներկայացնելով որպես իրական զոհ, իսկ հայերին՝ որպես պետության գոյության սպառնալիք: Նման հռետորաբանությունը ոչ միայն մեծացնում է լարվածությունը, այլև խրախուսում է մարդկանց ցեղասպանությունը համարել արդարացի:

«Լեմկինի ինստիտուտը նախագահ Ալիևին համարում է ցեղասպանություն իրականացնող պետության առաջնորդ, պետություն, որի ինստիտուտները ներծծված են ցեղասպանական գաղափարախոսությամբ, որի քաղաքականությունը ձևավորվում է ցեղասպանա-

կան նպատակներով, և որի ցեղասպանական հռետորաբանությունը ծառայում է որպես ներքին լեզվափոխության կարևոր բաղադր: Նախագահ Ալիևը ինստիտուտից հեռացրել է ցեղասպանական հայատյացությունը պետական բոլոր ինստիտուտներում և հասարակական կյանքում», - նշվել է հայտարարության մեջ:

Ինստիտուտի ներկայացուցիչները կարծում են, որ եթե արևմտյան աշխարհը գործողություններ չձեռնարկի և շարունակի հրահրել Ադրբեջանի նախագահին, ապագայում նրան ավելի լուրջ խնդիրներ են սպասվում: Որքան շատ անպատժելիություն շնորհվի նախագահ Ալիևին, այնքան ավելի շատ նա կծգտի իրականացնել «Մեծ Ադրբեջանի» իր երազանքները, որը կներառի նաև ներկայումս անկախ Զայաստանի Զանդակեթությունը: «Ցեղասպանության կանխարգելումը պահանջում է հստակություն: Առաջնորդները, որոնք իրենց գործողությունները տարածում են զոհերի վրա, նպաստում են զանգվածային վայրագություններին, այլ ոչ թե պայքարում են դրանց դեմ: Նրանք խաթարում են արդարությունը, այլ ոչ թե պաշտպանում այն», - նշվել է հայտարարության մեջ:

Ինստիտուտը կոչ է անում միջազգային համարված թույլ չտալ, որ պատմական հիշողությունը մանիպուլացվի՝ հոգուտ ցեղասպանական շարունակական ծրագրերի:

NEWS.am, 13.03.2026

ՆԺՌԵՆՅԱՆ ԴԱՍԵՐ

- * Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկա ավելի բարձր և նվիրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր հավիտենական սեփականության վերստացումը:
- * Ամեն մի «ես» հանցավոր ապստամբ է, ամեն մի «եսականություն» բարոյական մահափորձ է այն Մեծ Ամբողջի դեմ, որ ազգ է կոչվում:
- * Բավական չէ հիացական վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ դեպի անցյալ սերունդը. պետք է գերազանցել նրան: Դեռ սա է հարգանքի այն պսակը, որ յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է դնել նախնայաց հիշատակների կոթողին:
- * Միշտ էլ պարտվել են այն ազգերը, որոնք ունեցել են մեկ հենարան՝ քանակը: Կովաղաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան են պատկանում վաղվա հաղթանակները:
- * Ազգերը չեն ունեցել և պիտի չունենան ավելի մեծ թշնամի, քան նյութապաշտ առաջնորդը:
- * Անբարոյական է իրեն երջանիկ զգացող անհայրենիքը, լինի դա անհատ, թե ժողովուրդ:
- * Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժ իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Սահմանին գտնվող մշակութային ժառանգությունը հայ գիտնականների ու ավատրիացի հայագետի թիրախում

Ինչպե՞ս է պատերազմը փոխում սահմանին ապրող մարդկանց կենսակերպը, սահմանային նոր իրականությունն ի՞նչ սովորույթներ է առաջ բերում, ի՞նչ ազդեցություն ունի այդ իրականությունը մշակութային ժառանգության վրա: Այս և այլ հարցերի պատասխաններն են փորձում գտնել հայ գիտնականները ավատրիացի հայագետի հետ:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) լուսավոր, ոչ այնքան փոքր սենյակում՝ սեղանի շուրջը, հավաքվել են մշակութաբանության, հնագիտության, ճարտարապետության ու աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) մասնագետները: Նրանք ավատրիացի հայագետ Յասմին Դում-Թրագուտի հետ ուսումնասիրում են Հայաստանի սահմանային բնակավայրերի մշակութային ժառանգությունը:

Ամեն ինչ սկսվել է 2023 թ.: Ձալբուրդի համալսարանի դասախոս, հայագետ Յասմին Դում-Թրագուտի նախաձեռնությամբ հայ գիտնականները դիմել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հեռավար լաբորատորիաների ծրագրին: Նպատակը սահմանային բնակավայրերի մշակութային ժառանգության միջգիտակարգային հետազոտություն իրականացնելն էր: Ծրագիրը հաստատվել է և մեկնարկել 2023 թ. սեպտեմբերին: Ծարուսակվելու է մինչև 2028 թ.:

Հեռավար լաբորատորիաների ծրագիրը նախատեսում է երկու ղեկավար՝ Հայաստանի ներսում և դրսում աշխատող: Ծրագրի արտաքին ղեկավարը Յասմին Դում-Թրագուտն է, իսկ ներքին ղեկավարը՝ ՀԱԻ գիտաշխատող, ԵՊՀ դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Հայկուհի Մուրադյանը:

2026 թ. հունվարից ծրագրի հիմքի վրա կազմավորվել է ՀԱԻ նոր ստորաբաժանում՝ հայ մշակութային ժառանգության միջգիտակարգային ուսումնասիրությունների խումբը: Ծրագրով ընտրվել է պետական սահման ունեցող 3 մարզ՝ Տավուշը, Գեղարքունիքը ու Սյունիքը: Չնայած դրան՝ 2025 թ.-ին ծրագրում ընդգրկվել է նաև Վայոց Ձորի մարզի 2 բնակավայր՝ Մարտիրոսն ու Գնիշկը: Ծրագիրն սկսվել է Տավուշից, գիտնականներն այս տարի կայցելեն նաև Սյունիք, իսկ հաջորդ տարի՝ Գեղարքունիք: Դրանից հետո միայն տվյալները կամբողջացվեն, մեծածավալ հետազոտությունը կամփոփվի:

Խմբի նպատակը պատերազմից հետո սահմանային բնակավայրերի մշակութային ժառանգության հետազոտությունն է, որին համակցված է սահմանային նոր իրադրության հետևանքով մարդկանց կյանքի փոփոխությունը:

44-օրյա պատերազմն ազդել է նաև սահմանային բնակավայրերի մշակութային ժառանգության վրա: Հ. Մուրադյանը նշում է, որ իրենց խնդիրն է փորձել ինչ-որ առումով դառնալ մասնագիտական այն օղակը, որը կօգնի պետական կառույցներին հուշարձանների մասին տեղեկատվությունը թարմացնել, իսկ գիտական հանրույթի առաջ հանրայնացնել սահմանային բնակավայրի հուշարձանները: Դրա ամենալավ օրինակը Տավուշի Կիրանց գյուղում Առաքելոց վանական համալիրն է, որի դաշտային աշխատանքներին մաս-



նակցում էր նաև Յասմին Դում-Թրագուտը: Նրա իսկ նախաձեռնությամբ պատրաստվեց հայտ, ու Առաքելոցը 2025 թ. դարձավ «Եվրոպա Նոստրա»-ի կողմից հռչակված 7 վտանգված հուշարձաններից մեկը:

Այս տարի «Եվրոպա Նոստրա»-ի պատվիրակությունը ժամանելու է Հայաստան՝ տեղում ուսումնասիրություն կատարելու նպատակով: Առաքելոցում պեղումների աշխատանքը կղեկավարի Համազասպ Աբրահամյանը: Նա միջնադարյան հնագիտության մասնագետ է, զբաղվում է հողաշեն ժառանգության և պահպանության խնդիրներով, ուսումնասիրում է միջնադարյան խեցեղենի տիպաբանական խնդիրները, Դվինի արշավախմբի անդամ է:

Գիտաշխատողների մյուս խնդիրը տվյալներ հավաքելն է, որոնք նախատեսում են ներկայացնել բաց հասանելիություն ունեցող հարթակում, որը, սակայն, պետք է անվտանգ լինի: Գործընկերների հետ խորհրդակցում են այս հարցի շուրջ:

«Մեր ծրագրի շրջանակներում այն տվյալները, որոնք հավաքում ենք բնակավայրերից, թվային մի քանի մշակումներ են անցնում: Դրանցից մեկը GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) քարտեզագրումն է, այսինքն՝ այն բնակավայրերը, հուշարձանները, որոնք փաստագրում ենք, դրանց համար ստեղծում տվյալների բազա և քարտեզագրում: Իրականացնում ենք տարածական մի քանի վերլուծություն և հուշարձանների ֆոտոգրամետրիա, այսինքն՝ օդային անկյունների հիման վրա 3D մոդելներ ենք ստանում, որոնք կարող ենք օգտագործել նաև չափագրումների համար», - ասում է խմբի անդամ, հնագետ, GIS մասնագետ Արտյոմ Անանյանը:

Խմբի անեններիտասարդ անդամը Գայանե Ըռքոյանն է: Նա համակարգչով հուշարձանի հատակագիծ է նկարում: Գայանեն սովորում է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մագիստրատուրայի առաջին կուրսում, վերականգնող ճարտարապետ է:

Ըստ Հ. Աբրահամյանի՝ հետազոտությունը բազմաշերտ է, երբեմն տեղում ուսումնասիրության ժամանակ կարող է անսպասելի նոր շերտ, նոր հետազոտության թեմա բացվել: Այդպես եղել է Մովսես գյուղում: Այստեղ հետազոտության ժամանակ խումբը նկատել է հու-

շաղթյունների առատություն: Ի տարբերություն շատ գյուղերի՝ դրանք գտնվում են հենց գյուղի ներսում: Նա նշում է, որ Հայաստանում չկա այնպիսի բնակավայր, որտեղ 24 աղբյուր կարելի է տեսնել, ինչպես Մովսես գյուղում: Մինչդեռ, ըստ խմբի անդամ, ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ Անուշ Սաֆարյանի, պետական հուշարձանների ցանկում դրանցից երկուսն են գրանցվել, այն էլ խորհրդային ժամանակաշրջանում:

Ա. Սաֆարյանը հիմնականում ուսումնասիրում է ժամանակակից մշակութային հուշարձանները, հուշարձանաշինության գործընթացները: Փորձում է հասկանալ, թե ինչպես է գյուղը փոխվում, ինչ հուշարձաններ են ավելանում, ու ինչպես է երկխոսություն ստեղծվում միջնադարյան հուշարձանների հետ:

Հ. Մուրադյանի կարծիքով խնդիր է «մշակութային ժառանգություն» ասվածը, քանի որ ժառանգության ընկալման տարբեր մակարդակներ կան: Կա պետական ընկալում, թե ինչ է ժառանգությունը, որը պետք է ներառվի հուշարձանների ցանկում և պահպանվի, կա համայնքային ընկալում, երբ մարդիկ տևական ժամանակ այլ բան են կարևորել: Իրենք Կիրանցի Առաքելոց վանական համալիրի հետազոտության ժամանակ 30 միավոր են գրանցել, բայց գյուղում միայն կանգնած եկեղեցին գիտեին: Օրինակ՝ գյուղից դուրս բաղնիք կա, երբ գիտնականները ցույց են տալիս և ասում, որ սա անցյալում բաղնիք է եղել, տեղացիները զարմանում են, որովհետև բաղնիքն իրենց ընկալմամբ ուրիշ ձև ունի: Այսինքն՝ համայնքի ճանաչողության հարց կա նաև:

Հ. Աբրահամյանն էլ նշում է, որ Տավուշի մարզը սահմանի գրեթե ամբողջ եզրագծով ուսումնասիրել են: «Փորձել ենք համադրել իրավիճակների փոփոխությունները, գտնել բոլոր նոր իրավիճակները՝ դեմարկացիան, ղեկմիտացիան, սահմանին հայտնված հուշարձանները, մի քիչ ժամանակաշրջանը հետ տալով՝ մինչև խորհրդային շրջանը, երբ ուխտավայրերն ազատ էին, սահման չկար, բնակիչներն անցնում էին մի կողմից մյուս կողմը, հուշարձանները հասանելի էին, ապա 1990-ականների պատերազմն ինչ ազդեցություն ունեցավ, ինչպես փոխվեցին սահմանները, մի շարք հուշարձաններ դարձան անհասանելի՝ ուղղակի սահմանին հայտնվելով, հետպատերազմյան ժամանակ ինչպես է հուշարձանը, սահմանի վրա հայտնվելով, նորից հասանելի դառնում: Այս ամեն ինչին համադրեցինք նոր՝ դեմարկացիայի և ղեկմիտացիայի, աղվանականացման ադրբեջանական քաղաքականությունը, եթե անկալների հարցն առաջ գա, այդ հուշարձաններն ինչ կարգավիճակ կստանան»:

Ծրագրի ավարտին՝ 2028 թ., գիտաշխատողները կունենան Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի սահմանային բնակավայրերի մշակութային ժառանգության ամբողջական պատկերը:

Մարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Նարեկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Լրացավ ՀՀ ԳԱԱ նախագահության տպագրական բաժնի պետ Վլադիմիր Ստեփանյանի ծննդյան 75-ամյակը, որից շուրջ չորս տասնամյակը նա անմնացորդ նվիրել է ակադեմիական գրադարանակալության բնագավառին և իր մասնագիտական կարողությունները ներդրել գիտական աշխատությունների և հանդեսների տպագրության աշխատանքների կազմակերպման գործում: Վլադիմիր Ջիվանի Ստեփանյանը ծնվել է 1951 թ. Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: 1968 թ. ավարտել է

Գրապարտության անխոնջ մշակը

Բաքվի N 163 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտը, հեռակա կարգով՝ Ս. Կիրովի անվան պետական համալսարանը և ԽՍՀՄ Կենտրոնի առաջին կուրսական բարձրագույն դպրոցը:

1970-72 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում, զորացրվել է սպայի կոչումով:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Բաքվի հանրապետական «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում, եղել է թղթակից, պատասխանատու քարտուղարի տեղակալ, քարտուղար, որտեղ գործնականում խորապես յուրացրել է տպագրական գործի մասնագիտական գաղտնիքներն ու առանձնահատկությունները: 1998 թ. Ադրբեջանում թափ առած հակահայ զանգվածային խժոժություններից խուսափելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ստեփանյանների գերդաստանը Բաքվից տեղափոխվեց Երևան: Հայաստանի գիտությունների ակա-

դեմիայի նախագահության միջնորդությամբ և Երևանի քաղխորհրդի գործկոմի՝ 1989 թ. որոշմամբ, որպես բարձրակարգ մասնագետ, հրավիրվել է ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն և աշխատել որպես խմբագիր:

1992 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ նշանակվել է ակադեմիայի Աշտարակի տպարանի տնօրեն: 2002 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Երևանի տպարանում և 2008-2021 թթ. եղել է տպարանի տնօրենը: 2022 թ.-ից նա ՀՀ ԳԱԱ նախագահության տպագրական բաժնի պետն է:

Վ. Ստեփանյանը ՀՀ ժուռնալիստների միության և Լրագրողների միջազգային ասոցիացիայի անդամ է: Հեղինակել է «Գորիս» և «Հայաստան» գրքերը, որոնք թարգմանաբար հրատարակվել են ռուսերեն, անգլերեն և պարսկերեն: Հեղինակ է բազմաթիվ լրագրային հոդվածների:

2006 թ. հայրենի եզերքի հանդեպ ցուցաբերած ստեղծագործական աշխատանքի համար արժանացել է Գորիս

քաղաքի պատվավոր քաղաքացու կոչման: Հայ գրատպության 500-ամյակի կապակցությամբ գրադարանակալական ոլորտում ունեցած ավանդի համար 2013 թ. Վլադիմիր Ստեփանյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով և Գրիգոր Նարեկացու հուշանշանով:

Ակադեմիական համակարգում երկարամյա և արդյունավետ աշխատանքի համար Վ. Ստեփանյանը արժանացել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Գովեստագրի» և «Պատվոգրի»: Ծննդյան 75-ամյակի առթիվ նրան վերջերս շնորհվեց ՀՀ ԳԱԱ նախագահության «Վաստակագիր»:

Ջերմորեն շնորհավորում ենք մեր գործընկերոջը և մաղթում երկար տարիների կյանք, քաջառողջություն ու նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատարակչություն
«Գիտություն»
թերթի խմբագրություն

Կառլեն Գրիգորի ԱՂԱՄՅԱՆ



Հայաստանյան գիտական համայնքն անդամակցել է կորուստ կրեց 89 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ակադեմիկոս Բժիշկ և առողջապահության փորձառու կազմակերպիչ Կառլեն Գրիգորի Աղամյանը:

Կառլեն Աղամյանի մասնագիտական ուղին սկսվել է 1959 թվականին՝ ռազմական բժիշկ որակավորմամբ Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում ավարտելուց հետո:

Ապիրանտուրան ՀԽՍՀ առողջապահության նախարարության Սրտաբանության և սրտի վիրահատության ինստիտուտում (1962 թ.) կանխորոշեց նրա հետագա ճակատագիրը: Իր ընդունակությունների և բացառիկ աշխատասիրության շնորհիվ նա մեծ ծանապարհ է անցել՝ կրտսեր գիտաշխատողից մինչև գիտությունների դոկտոր, ինստիտուտի տնօրեն (1979 թ.), համառապետության գլխավոր սրտաբան, Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Շատ լայն է Կառլեն Աղամյանի մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը: Զբաղվելով ընդհանուր և անհետաձգելի սրտաբանության խնդիրներով, սրտի իշեմիկ հիվանդության, սրտամկանի սուր ինֆարկտի, սրտի արատների ախտորոշման և բուժման ժամանակակից հայեցակարգերի մշակմամբ և այլ հարցերով՝ նա առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում կլինիկական և ֆունկցիոնալ ուղղությանը, որը ներառում է սրտի ֆունկցիոնալ հարմարվողականության, սրտային անբավարարության զարգացման մեխանիզմների և կլինիկական սրտաբանության մեջ կենսառիթմաբանության դերի ուսումնասիրությունը:

Կ. Գ. Աղամյանը Հայաստանի սրտաբանական ծառայության հիմնադիրն է, որի գործունեությունը հնարավորություն է ընձեռել զգալիորեն նվազեցնելու հիվանդների մահացության թիվը կանխարգելման, վաղ ախտորոշման և արդյունավետ բուժման միջոցով:

Հայաստանի հեռավոր Ախտորոշման կենտրոնի հիանալի փորձը ներդրվել է նաև մի շարք այլ սրտաբանական ինստիտուտներում: Սիրտ-անոթային հիվանդությունների ռադիոնուկլիդային ախտորոշման մեթոդների մշակման և ներդրման համար Կառլեն Աղամյանն ու իր գործընկերները 1988 թվականին արժանացել են ՀԽՍՀ պետական մրցանակի:

Կառլեն Աղամյանի ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են ավելի քան 500 գիտական աշխատությունում, 9 մենագրությունում, 6 գյուտում, ավելի քան 120 զեկույցում, որոնք ներկայացվել են սրտաբանների համաշխարհային և եվրոպական համաժողովներում: 1979 թվականից նա ղեկավարել է Հայաստանի սրտաբանների միությունը, որը 1996 թվականից վերակազմավորվել է Հայաստանի սրտաբանների ընկերակցության: Կառլեն Աղամյանը ոչ միայն պրակտիկ բժշկի և հետազոտողի, այլ նաև մանկավարժ-առաջնորդի վառ օրինակ է: Նա արժանի գիտական կադրեր է նախապատրաստել՝ գիտության 21 դոկտոր և 30 թեկնածու: 30 տարուց ավելի լինելով Հայաստանի սրտաբանական խոշորագույն կազմակերպություններից մեկի տնօրենը՝ Կառլեն Աղամյանը նախևառաջ առաջնորդվում էր բարձր որակավորման բժիշկների և գիտնականների նախապատրաստման կարևորության գիտակցմամբ:

Կառլեն Աղամյանի ծառայությունները ժողովրդի, պետության և բժշկության առաջ գնահատվել են ըստ արժանվույցի: Նա պարգևատրվել է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով, «Մխիթար Հերացի» մեդալով, Երևանի քաղաքապետարանի ոսկե մեդալով (2011 թ.): Սրտաբանների եվրոպական ընկերակցության գլխավոր ասամբլեայի կողմից «Սրտաբանության ասպարեզում ակնառու ձեռքբերումների համար» Կառլեն Աղամյանը պարգևատրվել է Եվգենի Չագովի անվան ոսկե մեդալով (2007 թ.): Նա արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ կոչման, ընտրվել է Սրտաբանների եվրոպական ընկերակցության պատվավոր անդամ, իր հայրենի Գյումրի քաղաքի պատվավոր քաղաքացի էր: Կառլեն Աղամյանին հարգում էին և սիրում գործընկերներն ու աշակերտները, նրա շնորհիվ ապաքինված հազարավոր բուժառուները:

ՀՀ ԳԱԱ նախագահությունն իր ցավակցությունն է հայտնում ակադեմիկոս Կառլեն Աղամյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ողջ գիտական համայնքին:

Ականավոր բժիշկ և գիտնական, ակադեմիկոս Կառլեն Աղամյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԿՅՆՆԵՐԻՑ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Եվրոպան ապրում էր իր «Ոսկե դարը»: Փարիզը շքեղության, նորածնության և արվեստի կենտրոնն էր, որտեղ հավաքվում էին աշխարհի մեծահարուստները՝ ռուս իշխաններից մինչև ամերիկյան արդյունաբերողներ:

Սակայն նրանց բոլորի մեջ առանձնանում էր մի մարդ, ում մասին լեգենդներ էին պտտվում: Նա բարձրահասակ էր, միշտ անթերի հագնված, արիստոկրատ կեցվածքով և վճռական հայացքով: Դա Ալեքսանդր Մանթաշյանն էր՝ հայ նավթային արքան, ում ձեռքում էր կենտրոնացած Բաքվի «սև ոսկու» առյուծի բաժինը:

Մանթաշյանը սիրում էր Փարիզը, իսկ Փարիզը պաշտում էր նրա փողերը: Բայց մի երեկո Ֆրանսիայի սրտում տեղի ունեցավ մի միջադեպ, որը ցնցեց տեղի բարձրաշխարհիկ հասարակությանը և դարձավ պատմական անելոդոս:

Ամեն ինչ սկսվեց սովորականի պես: Մանթաշյանը իր մտերիմ ընկերների հետ ընթրում էր Փարիզի ամենաէլիտար և փակ ռեստորաններից մեկում: Մանթաշյանի սիրտը գինու և ջերմ զրույցների ազդեցության տակ կարող էր լցվեց: Նրա հոգին հարազատ մեղեդի պահանջեց: Նա կանչեց գլխավոր մատուցողին, նրա գրպանը սահեցրեց խոշոր թեյակմար և խմորեց:

Բարեկամ, փոխանցիր դիրիժորին իմ խնդրանքը: Թող նվագեն որևէ հայկական կամ կովկասյան մեղեդի: Հոգիս տուն է ուզում:

Մատուցողը մոտեցավ դիրիժորին և ինչ-որ բան շշմարտեց: Դիրիժորը, ով իրեն համարում էր բարձր արվեստի միակ պահապանը, դեմքը ծամածռեց և բարձրաձայն, որպեսզի լսելի լինի հարակից սեղաններին, պատասխանեց:

«Պարոն, սա Փարիզի լավագույն հաստատությունն է: Մենք այստեղ կատարում ենք Շոքրատու, Բախ և Մոցարտ: Մենք չենք իջնի այն մակարդակին, որ նվագենք ինչ-որ «բարբարոսական» արևելյան մեղեդիներ»:

Դահլիճում քար լռություն տիրեց: Ֆրանսիացի ազնվականները քնծիծաղով նայեցին հայ մեծահարուստի կողմը: Մանթաշյանի ընկերները քարացան՝ սպասելով սկանդալի: Բայց Մանթաշյանը չբողբեց, նույնիսկ ծայրը չբարձրացրեց:

Մանթաշյանը հանգիստ վեր կացավ և դանդաղ քալելով մոտեցավ ռեստորանի սեփականատիրոջը, ով կանգնած էր մուտքի մոտ:

Մայր, դիմեց նա սեփականատիրոջը, շատ հաճելի հաստատություն ունեք: Ի՞նչ արժե այն:

Ներեցեք, պարոն, չհասկացա, շփոթվեց ֆրանսիացին:

Ես ուզում եմ գնել այս ռեստորանը: Հե՞նց հիմա: Ասա՛ գինը:

Բայց, պարոն, այն չի վաճառվում... Սա իմ ընտանեկան բիզնեսն է:

Ամեն ինչ վաճառվում է, մայր, հարցը միայն գինն է, ժպտաց Մանթաշյանը և հանեց իր չեկի գրքույկն ու ոսկե գրիչը:

Գրիր այնպիսի թիվ, որի դիմաց դու պատրաստ ես հենց հիմա զիջելու ինձ ռեստորանը:



Ինչպես Մանթաշյանը գնեց Փարիզի ամենաշքեղ ռեստորանը մեկ երգի համար

Ֆրանսիացին, տեսնելով Մանթաշյանի վճռականությունը, կատակով նշեց մի աստղաբաշխական գունար, որը մի քանի անգամ գերազանցում էր ռեստորանի իրական արժեքը: Մանթաշյանը, առանց այլընտրանքի, լրացրեց չեկը, ստորագրեց և պոկեց թուղթը:

Շնորհավորում եմ, ասաց նա ապշահար սեփականատիրոջը: Այժմ սա իմ ռեստորանն է:

Գործարքից անմիջապես հետո Մանթաշյանը տվեց իր առաջին հրամանը՝ որպես նոր սեփականատեր:

Այս դիրիժորին և նվագախմբին՝ դուրս: Իսկ հիմա գնացե՛ք և բերե՛ք Փարիզում գտնվող բոլոր հայ երաժիշտներին:

Կես ժամ չանցած՝ Փարիզի ամենաազնվական թաղամասը թնդում էր: Բեն բարձրացան գունաչիները, դիուլահարները և թառահարները: Շքեղ ջահերի ներքո սկսեցին հնչել «Քոչարին», «Թամազարան» և հայկական ժողովրդական այլ երգեր:

Կարծում եք, թե ֆրանսիացի «սնոր» հյուրերը հեռացան: Ոչ: Մանթաշյանը հրամայեց փակել դռները և հայտարարեց:

Այս գիշեր բոլորն իմ հյուրն են: Շամպայնը և խավիարը՝ իմ հաշվին:

Եվ Փարիզի էլիտան մինչև լուսաբաց պարեց հայկական երաժշտության տակ:

Երբ լուսացավ, և խնջույքն ավարտվեց, Մանթաշյանը կանչեց ռեստորանի նախկին տիրոջը (ով դեռ շուկի մեջ սեղմել էր չեկը): Մանթաշյանը նրան վերադարձրեց սեփականության փաստաթղթերը:

Վերցրու ռեստորանդ հետ, ասաց նա: Ինձ ռեստորան պետք չէ: Ես պարզապես ուզում էի լավ երաժշտություն լսել և սովորեցնել ձեզ հարգել ուրիշի մշակույթը:

Նա թողեց ապշած ֆրանսիացուն, նստեց իր կառքը և հեռացավ: Այդ օրվանից հետո, երբ Մանթաշյանը մտնում էր այդ ռեստորան, նվագախումբն ինքնակամ, առանց խնդրանքի, սկսում էր նվագել հայկական մեղեդիներ:

mediamag.am, 09.02.2026

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի փորձարարական կենդանաբանության և ձկնաբանության լաբորատորիաների վարիչների թափուր տեղերի համար:

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2025 թ. հունվարի 30-ի N 102-Ն որոշման» մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված գինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է բնական գիտությունների մասնագիտություններով ՄԳՀ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն երեքում համդեպ և զալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին, բ) ինքնակենսագրություն,

գ) կադրերի հաշվառման ամօճական թերթիկ՝ լրացված,

դ) լուսանկար (2 հատ),

ե) ամօճագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,

թ) բնութագիր վերջին աշխատավայրից,

ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Պարույր Սևակի փողոց 7, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ՊՈԱԿ (գիտական քարտուղարին), հեռ. +374 091 36 92 92:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16 Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝

448: Էլ. հասցեն՝ armine.pet21@mail.ru

Ստորագրված է տպագրության՝ 24.03.2026 թ.:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: